

ՓԱՅՏԱԿ ԱՆԹԱԲՅԱՆ

«ՏՕՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Հայկական ձեռագրական հարուստ ժառանգության մեջ պահպանվել են և կեղեցա-ծիսական կիրառության համար նախատեսված մի քանի ուրույն ժողովածուներ: Դրանց պատմա-հասարակական դերը միջնադարում եղել է նշանակալից ժողովրդի հոգեոր-բարոյական կյանքը կազմակերպելու և իմացական մակարդակը բարձրացնելու խնդրում: Մեր պատմությանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքին, փիլիսոփայական ու գեղագիտական մտքին, լեզվին, կենցաղին, հոգեոր կյանքի կառուցվածքին առնչվող հարցերի լուսաբանության համար զրանք փաստական տռատ նյութ ու լայն հնարավորություններ են ընձեռում: Դրանցում ընդգրկված են ոչ միայն կրոնական ու ծիսական երկեր, այլև պատմական բնույթի աշխատությունների փոքր կամ ընդարձակ հատվածներ, ձառեր, ներրողներ, վարքագրական ու վկայաբանական կարևոր երկասիրություններ, խրատներ, հրաշապատում գեղարվեստական զրույցներ, քարոզներ, ներրողներ, փոքրածավալ լուծմունք-մեկնություններ, ընդարձակ մեկնություններից քաղված հատվածներ, հազվագեպ՝ դանձեր, տաղեր և այլն: Հիշյալ նյութերի ժամրային պատկանելության, բազմազանության ու շոշափած թեմաների հարստության այս հանդամանքն էլ հենց ստանում է պատմա-ճանաշողական որոշակի արժեք հայկական միջնադարի մասին հստակ պատկերացում կազմելու համար: Ուստի և հայ բանասիրության համար խոր հետաքրքրություն են ներկայացնում զրանց գիտական, մատենագրական, բնագրագիտական առանձնահատկություններն ու արժեքը: Դրանց շահեկանությունը, հատկապես բնագրագիտական առումով, ակնհայտ է նաև հունա-ասորական զրականության վաղ շրջանի պատմության համար, քանի որ ընդգրկված մի շաբք երկեր հույն և ասորի հեղինակների զրչին են պատկանում:

Այդ ժողովածուները շատ են, ունեն կիրառության տարբեր նպատակ ու նշանակ: Սակայն այս առիթով մեզ հետաքրքրում են զրանցից միայն հինգը՝ Ճաշոցը, Հայոմավուրը, Ճառընտիրը, Տոնացույցը և Տոնապատճառը, որոնք տարբեր ժամանակներում համապատասխանաբար Տոնամակ, Տոնանամակ, Տոնական, Ճառընտիր, Տոնացույց, Տոնացուցակ, Հայոմավուրը, Ճաշոց, Տոնապատճառ, Պատճառ տոնից անուններն են ստացել: Թեև բոլորն էլ հասել են մեզ և մի քանիսը (Տոնացույց, Հայոմավուրը, Ճաշոց) այժմ էլ օգտագործվում են եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ, սակայն, դժբախտաբար, առ այսօր զրանց (բացառությամբ Հայոմավուրի)<sup>1</sup> նվիրված հատուկ մասնա-

1. Բացառաբար սույն ժողովածուի մասնագիտական քննությամբ զրադիլ են Պ. Պիտերը (Pour L'Histoire du synaxaire arménien: Analecta Bollandiana, 30, 1911, էջ 5—26), Ա. Էռերինցերը (Die Passio des hl. Januarius von Benevent und seiner Genossen. Aus dem Armenischen übersetzt, Theologie und Glaube 5, 1913, 369—374), Կ. Աղոնցը

գիտական ուսումնասիրություններ չկան, ուստի և այդ հարցում գոյություն ունի ոչ հստակ պատկերացում, իսկ երբեմն էլ շփոթություն: Այլեալլ առիթներով անցյալում զրանց մասին առանձին դիտողություններ են արել հայագետներ Մ. Չամչյանը, Գ. Զարրհանալյանը, Ղ. Ալիշանը, Մ. Օրմանյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ: Փոքր ինչ հանգամանալից է եղել Մ. Ավգերյանի<sup>2</sup> և Ն. Ակինյանի<sup>3</sup> խոսքը: Ասենք նաև, որ վերոհիշյալ բանասերների դիտողությունների մեջ տեղ են գտել որոշ անձտություններ հատկապես նշված ժողովածուների անունների պատկանելությունը ճշտելու խնդրում: Մ. Ավգերյանն, օրինակ, իրավացիորեն Տոնամակը նույնացնում է ճաշոցի հետ<sup>4</sup>, սակայն, Ղ. Ալիշանը՝ Տոնականի հետ<sup>5</sup>, իսկ Մ. Օրմանյանը գրեթե բոլորը միացնում է մեկ ընդհանուր ժողովածուի՝ Հայսմավուրքի անվան տակ<sup>6</sup>: Գ. Զարրհանալյանը ևս այս կապակցությամբ իր տեսակետը ստուգապես շի ճշտել: Առում Անձեացու վերաբերյալ խոսելիս նա իմիշիալոց գրում է, որ վերջինս հորինել է սրբերի վարքերի մի ժողովածու, որը կոչվել է «Ատոմագիր» և «Հոռոմագիր»: Ըստ նրա ենթադրության, հիշյալ ժողովածուն կոչվել է նաև Տոնացույց և Տոնացուցակ<sup>7</sup>: Ուրեմն, նրա համոզմամբ այս անունները վերաբերում են միևնույն ժողովածուին: Բայց, մեր կարծիքով, դա այդպես չէ, քանի որ Տոնացույցը վարքարանական ժողովածու երբեք չի եղել:

Ավելի նեղ մասնագետները, անշուշտ, զրանց մասին ճիշտ պատկերացում ունեն: Օրինակ, նշված անորոշությունը ձեռագրացուցակներում գրեթե բացակայում է:

Այդուհանդերձ, կարծում ենք խնդրո առարկա ժողովածուներին առնշվող շատ հարցեր բայց էության գեռ չեն քննարկված ու լուսաբանված: Մենք, իհարկե, չենք հավակնում այստեղ ներկայացնել հիշյալ ժողովածուների լիակատար ուսումնասիրությունը, որը խիստ անհրաժեշտ է և որին, ի դեպ, արդեն ձեռնարկել ենք, բայց հարկ ենք համարում մասամբ անդրագառնալ զրանց անունների ու բովանդակության փոխհարաբերություններին և պատկանելությանը՝ մեր հիմնական խոսքը վերապահելով այլ առիթի:

Առկա սկզբնագրյուրների և նշված ժողովածուների բազմաթիվ ձեռագրերի հետազոտությունը մեզ բերել է այն եզրակացության, որ վերօհիշյալ անուններից երբեմն նույնիսկ շորսը վերաբերում են միևնույն ժողովածուին, բայց ժողովածուներից և ոչ մեկը չի նույնանում մյուսին, թեկուզ և փոխադարձ ընդհանրությունները սակավ չեն: Այսպես, օրինակ, Տոնականը երբեք շպիտի շփոթել Տոնամակի-Տոնանամակի և ոչ Տոնացույցի-Տոնացուցակի հետ, որովհետեւ դրանք տարբեր նպատակներով ու ծրագրերով կազմված, տարբեր կառուցվածք ու բովանդակություն ունեցող ժողովածուներ են:

(ote sur les synaxaires arméniens: Revue d'Orient Cœretien. 24, 1924, էջ 211—218), Ա. Տեր-Ներսեսյանը (Le synaxaire arménien de Grégoire VII d'Anazarbe: Melangeo Paul Peeters, Analecta Bollandiana, 68, 1950, էջ 261—285), սակայն այս հարցում ևս հիմնականը դեռևս մնում է իրազործելի:

2 Ա. Ավգերյան, Լրումն լիակատար վարուց, ԺԱ, Վենետիկ, 1814, Ներածութիւն, էջ ԿԲ—ՂՋ:

3 Ն. Ակինյան, Հովսեփ Կոստանդնուպոլիսցի, «Հանդիս ամսօրյա», 1957, էջ 1—12:

4 Մ. Ավգերյան, նշվ. աշխ., ԺԱ, Ներածութիւն, էջ ՂԱ:

5 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 30—31, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 107—108:

6 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Կ. Պոլիս, 1812, էջ 982:

7 Գ. Զարրհանալյան, Պատմութիւն Հայ դպրութեան, Վենետիկ, 1897, էջ 569:

Ճաշոցը և Հայսմավուրքը եկեղեցա-ծիսական ամենօրյա կիրառություն ունեն: Համաձայն Հայ եկեղեցու ծիսական կարգուկանոնի, դրանցից Հավուր պատշաճի կատարվում են Համապատասխան հատվածների բնթերցումներ, որոնք նախատեսված են ամրող տարվա ամեն մի օրվա Համար առանձին: Այս սկզբունքով էլ դրանցում նյութերի բաժանումներն ունեն օրացուցային կարգ: Այս խմբի ժողովածուներում (Հատկապես Ճաշոցում) դերիշխում են ծիսական-կրոնական նյութերը:

Տոնացույցը (նույնն է նաև Տոնացուցակը) նույնպես այս խմբին է պատկանում: Այն ևս եկեղեցա-ծիսական ամենօրյա կիրառություն ունի, միայն թե դրանում նյութերի մեկտեղում չկա այն կարգով, ինչով որ կազմվել են սույն խմբի մյուս ժողովածուները: Նոր Հայկազյան բառարանի ճշգրիտ բնորոշմամբ Տոնացույցը «Յուցակ տօնից է և տօնական պաշտամանց, իբր օրացոյց եկեղեցական...»<sup>8</sup>, այսինքն՝ ուղեցույց-մտայան, որտեղ Համապատասխան կարգ ու ցուցմունքներ կան եկեղեցական ամենօրյա ժամակարդության, տոնների, ծիսակատարությունների և Համապատասխան արարողությունների ժամանակ երգվելիք շարականների ու կարգացվելիք աստվածաշնչային հատվածների բնթերցումների վերաբերյալ: Այն վերջնական տեսքի է բերել XVIII դ. Միմեռն կաթողիկոս Երևանցին:

Սակայն, սույն խմբի հետ ունեցած իրենց որոշ բնդանրություններով հանդերձ, Ճառընտիրն ու Տօնապատճառն այլ խումբ են ներկայացնում, թեև նույնպես ստեղծվել են եկեղեցում ծիսակատարությունների ժամանակ կիրառվելու Համար, բայց չունեն ամենօրյա օգտագործման վերոհիշյալ կարգը, բացի դրանից, շատ ավելի ուրույն և ազատ են նյութերի ու թեմատիկայի բնդրկմամբ: Այս հանդամանքը դրանց շահեկանության և արժեքի վրա թողել է ավելի բարերար աղեցություն:

Ճառընտրի մեջ տեղ են գտել տռավելապես հանդիսավոր, Հոետորական խոսքի ստեղծագործություններ՝ Ճառ, ներբող, տեսիլք, պատմություն և այլն, որոնք կիրակի օրերին և տոնից-տոն արտասանվել կամ բնթերցվել են եկեղեցում: Սույն ժողովածուի մեջ Համեմատաբար քիչ են վարքերն ու վկայարանությունները, որոնք ավելի շուտ տեղ են գտել Հարանց վարք և Հայսմավուրք կոչվող ժողովածուներում, որոնցում դրանք գերակշիռ են որակավորող նշանակություն ու արժեք ունեն:

Ճառընտիրը մի տեսակ «ընտիր երկերի» տնտահմանափակորեն աճելու հեռանկար ունեցող այն ժողովածուն է, որը, կարծես թե, նաև ազատ բնթերցանության Համար է նախատեսվել: Ճառընտրի հետ է կապվում և նույնիսկ նույնանում է Տօնականը: Մատենագարանի 1202 թվականին բնդօրինակված № 7729 ձեռապիրը, որը Հայտնի է «Մշո Ճառընտիր» անունով, իր իսկ հիշատակարաններում կոչված է «Տօնական»:<sup>9</sup> Այս ժողովածուն Գ. Հովսեփյանը նույնպես կոչել է Տօնական, բայց Բ. Սարդիսյանն անվանել է Ճառընտիր<sup>10</sup>: Երբ այն Համեմատում ենք վերոհիշյալ ժողովածուներից յուրաքանչյուրի հետ, ամե-

8 «Նոր բազիքը Հայկազեան լեզուի», թ. Վենետիկ, 1837, էջ 902:

9 Մատենագարան, ձեռ. № 7729, էջ 902ա:

10 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիմիաս, 1951, էջ 699, 723:

Բ. Սարդիսյան, Մայր ցուցակ Հայերն ձեռագրաց, թ. Վենետիկ, 1924, էջ 435:

ոյարդությամբ տեսնում ենք, որ նման է ավելի ուշ «Ճառընտիր» անունն ընդունած ժողովածուին:

Նոր հայկազյան բառարանի հեղինակների կողմից օգտագործված մի Ասկեփորիկի վկայությամբ՝ «Սողոմոն Մաքենոցի հայրն արար զՏօնականն»<sup>11</sup>, Մեզ հասած «Գրոց ցանկերում» ևս պահպանված է այս վկայությունը<sup>12</sup>: Մշտ ճառընտիրի ձեռագրի հիշատակարանն էլ հիշեցնում է, որ այն ըստ մեծի մասին առնչվում է Սողոմոն Վանահոր կազմած Տոնականին<sup>13</sup>:

Այս կարծիքին է եղել Բ. Սարգիսյանը դեռ շատ վաղուց<sup>14</sup>: Այսպիսով, տարակույս չի մնում, որ 1202 թվականին գրված Մշտ ճառընտիրը և Տոնական է. և ճառընտիր, այսինքն՝ երկուսն էլ միաժամանակ:

Տոնական է նաև Վիեննայի Մխիթարյանների № 224 ձեռագիրը, ինչպես վկայված է գարձյալ իր իսկ հիշատակարանում. «Փառք... որ ետ կարողութիւն հասանել ի յետին զիծ ոսկեփոր Տօնականիս...»: Ճառընտիրների հետ կատարված համեմատությունը ցույց է տալիս, որ այն իրապես ճառընտիր է և ոչ այլ ինչ: Տաշյանը ինքն էլ այն դիտել է իրու այդպիսին ու նշել. «Մատեանս է ճառընտիր-Տօնական»<sup>15</sup>:

Տոնական է Մաշտոցյան մատենադարանի № 994 ձեռագիրը դարձյալ իր իսկ հիշատակարանի վկայությամբ. «...սուրբ զիրքս զայս, որ անուանի Տօնական»<sup>16</sup>: Բովանդակությամբ ևս այն համբնկնում է ճառընտիրին: Այսպիսի Տոնական-ճառընտիրներ շատ-շատ են հասել մեզ, ինչպես, ասենք, մեր № 992, 993, 995, 996, 1524 և այլ ձեռագրեր: Լ. Խաչիկյանը ևս Տոնականը դիտել է իրու ճառընտիր<sup>17</sup>: Այսքանն էլ, կարծում ենք, բավական է ցույց տալու համար, որ Տոնականը միևնույն ճառընտիր ժողովածուն է:

Մեր կարծիքով, Հոռոմադիրը, կամ ըստ ումանց՝ Հոռոմագիրը, ինչպես նաև Ատոմադիրը, հիմնականում մեր այսօրվա Հայսմավուրքի նախատիպերն են: Ասում ենք հիմնականում, որովհետև առաջինները կազմվել են X դ. սկզբներին, երբ Հայսմավուրքը, իրու այդպիսին, ըստ երեսվթին, գոյություն չի ունեցել: Բայց, քանի որ, ինչպես աղբյուրներն են վկայում, դրանք առավելապես բաղկացած են եղել վարքարանական և վկայարանական երկերից, ապա սկսած է հնթագրել, որ դրանք ավելի առնչվում են Հայսմավուրքին և ոչ, ասենք, Ճաշոցին, Տոնացուցին, Ճառընտիրին կամ Տոնապատճառին, թեև վերջին Երեկուսի մեջ էլ կան վարքարանական որոշ նյութեր: Ինչպես արդեն նշել ենք, հիշյալ ժողովածուներից Հայսմավուրքը, Տոնացուցը կամ Տոնացուցակն ու Ճաշոցն են, որ ունեն օրացուցային կանոնավոր բաժանում, իսկ մյուսները՝ ոչ, Ատոմադիրը կամ Հոռոմադիրը, ըստ առկա վկայությունների, նույնպես ունեցել է այդպիսի բաժանում: Հոռոմադիր անունն էլ զալիս է այդ բաժանումը կարգավորելու սկզբունքից, որը իրագործվել է ըստ Հոռոմեական ամիսների և օրերի<sup>18</sup>: Հետեւարար, այս էլ խոսում է այն մասին, որ իրոք, Ատոմադիրը կամ

11 Նոր բառիրը հայկազեան լեզուի, Բ., էջ 901:

12 Հ. Անայան, Հայկական մատենադարանիտթյուն, Ա., Երևան, 1959, էջ 1-ի:

13 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 710:

14 Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 435:

15 Հ. Տաշյան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց..., Վիեննա, 1895, էջ 572:

16 Մատենադարան, ձեռ. № 994, էջ 484ա:

17 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Բ., Երևան, 1958, էջ 177, 403:

18 Պ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 30, Գ. Զարբիանալյան, նշվ. աշխ., էջ 569:

Հոռոմագիրը, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնականում կապվում է Հայութավորքի հետ:

Տոնամակը (նույնն է նաև՝ Տոնանամակը) իրապես ոչ այլ ինչ է, եթե ոչ ծաշոցը, ինչպես արդեն դիտել են բանասերներից ոմանք<sup>19</sup>. Նոր հայկապյան բառարանում այդպես էլ բացատրված է. «Տօնամակ»-ը տօնից ամին կարգ և ցուցակ՝ ընթերցուածովք, այն են ձաշոյք ամի-ամի տօնից տարեկանաց, որ յետինս ծաշոց գիրք ասի»<sup>20</sup> և կամ «...որպէս և զիրքն ընթերցուածոց պատարգի, որ առ նախնեօք Տօնամակ, առ մեօք ծաշոց ասի»<sup>21</sup>:

Դ. Ալիշանը մատնացուց է արել, որ Գրիգոր Վկայասերը իր հիշատակարանը դետեղել է ծաշոց գրքի մեջ, որը վերջինիս կողմից անվանվել է Տոնամակ<sup>22</sup>: Նա միաժամանակ վկայում է, որ Կիրակոս վարդապետը ևս ծաշոցը կոչել է Տօնամակ<sup>23</sup>: Նշանակում է, զեռ այն ժամանակ նույնացվել են Տօնամակը, Տոնանամակն ու ծաշոցը (վերջինս երեմն կոչվել է նաև Տարեգիրք)՝<sup>24</sup>:

Բայ Երևույթին, Տօնամակ կոչվել է ծաշոցը նախապես այն պատճառով, որ այնտեղ կենտրոնացված են տարվա բոլոր տոների համար նախատեսված համապատասխան ընթերցանությունները, որոնք հիմնականում քաղված են Հին և Նոր կտակարանից: Ծաշոցը այն երկրորդ ժողովածուն է, որի մեջ նյութերի բաժանումը կատարված է օրացուցային կարգով և հաջորդականությամբ, ինչպես, ասենք, Հայութավորքում: Այն ունի մի այլ առանձնահատկություն ևս, որով զատորոշվում է այդ կարգի մյուս ժողովածուներից. Նյութերի սկզբում բացատրական խոսք կա այս կամ այն միավորի ընթերցանությանը նախորդող ժամանակաշատվածի արարողությունների և ընթերցումների մասին: Ընդհանրապես նախատեսվում է համապատասխան մի տուն սաղմոս ասել և ապա միայն սկսել հիշյալ միավորի ընթերցումը: Ծաշոցը բացառապես եկեղեցա-ծիսական կիրառություն ունի: Այն քննարկվող ժողովածուներից միակն է, որն օգտագործվում է նաև պատարագի ընթացքում: Մյուս ժողովածուներին առնշվող նյութերը խիստ հազվադեպ են ծաշոցում:

Այսպիսով, խնդրո առարկա ժողովածուները, իրենց պատմական դարգացման ու երկարատև գոյության ընթացքում ունենալով բնագրական, ծավալային այլ կազմություն և, երեմն, տարբեր խմբագրություններ, կրել են տարբեր անուններ, և քանի որ այդ անուններից մի քանիսը շեն պահպանվել համապատասխան ժողովածուների խորագրերում, այլ միայն զանազան վկայությունների մեջ, ուստի և շփոթվելու առիթ են տվել:

Վերոգրյալ մեր համառոտ դիտողությունները, որոշ դադարիար տալով նշված ժողովածուների բովանդակության ընդհանուր ընդորկումների մասին, միաժամանակ պարզ ցույց են տալիս, որ նույնն է Տոնացուցն ու Տոնացուցակը, Տոնականն ու ծառընտիրը, Տօնամակը, Տոնանամակը, Տարեգիրքը և ծաշոցը, Հոռոմագիրը (նաև՝ Հոռոմագիր), Ատոմագիրն ու Հայութավորքը, և, ինչպես քիչ հետո կտեսնենք, Տոնապատճառն ու Պատճառ-տոնիցը:

19. Մ. Ավգերյան, նշվ. աշխ., ԺԱ, ներածություն, էջ 7Ա:

20. «Նոր բառզիրք հայկական լեզուի», Բ, էջ 171:

21. Անդ, էջ 901:

22. Դ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 32:

23. Անդ, էջ 32:

24. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ, էջ 231. Գ. Երեան, 1967, էջ 19,

33, 70, 387:

Դրանք ժամանակի ընթացքում փոփոխվելով, խմբագրվելով վերանել են մեկը մյուսին և երրեմն նույնիսկ նույնացել են<sup>25</sup>:

Այժմ Տոնապատճառի, նրա կազմության և կաղմողների մասին: Տոնապատճառը ուրույն միավոր է, տարրերվում է Ճաշոցից, Հայոմավուրբից, Ճառնտրից, Տոնացուցից ինչպես իր նպատակագրությամբ, այնպես էլ թեմատիկ բովանդակությամբ ու կառուցվածքով: Նրա մեջ տեղ են գտել առավելապես կրոնական տոների իմաստին, խորհրդին վերաբերող «պատճառ»-ներ, այսինքն՝ բացատրություններ՝ կրոնագիտական առատ մանրամասնություններով: Երբեք Հիշյալ տոների նյութն ու բովանդակությունը շի պատմվում այնպես, ինչպես հայոմավուրբների մեջ: Հիշյալ «պատճառ»-ները երբեմն վերաբերում են նաև կրոնական մի շաբք երկերի, դրանց ստեղծման հանգամանքների և բովանդակության բացահայտմանը, ճիշտ այնպես, ինչպես մեր մատենագրության մեջ տեղ գտած մյուս բազմաթիվ «պատճառ»-ները: «Պատճառ»-ի կիրառական սկզբունքը և նպատակը այստեղ նոր եղանակ ու միտում շունեն: Հիշյալ ժողովածուի Տոնապատճառ կամ Պատճառ—տոնից անվանումը այս ելակետով է արված և խիստ համապատասխան է նրա բովանդակությանը: Տոնապատճառը ընդգրկում է նաև այլ նյութեր, ինչպես Ս. Գրոց և մի քանի ձառերի (Հիմնականում մեկնողական բնույթի) լուծմունքներ, «տեսություններ», աստվածարանական և դավանարանական որոշ երկեր, քիչ թվով՝ ճառեր, մի տեսակ տեղեկատու-զեկուցագրեր մարդարեների, առարյալների, մարտիրոսների վերաբերյալ, որոնք, սակայն, շունեն վարքագրական ձև ու բովանդակություն, ավելի շուտ՝ դարձյալ բացատրական ու գնահատական բնույթի են:

Տոնապատճառում զետեղված երկերի հեղինակներից են Հիմնականում՝ Հակոբ Տյառնեղբայրը, Կյուրեղ Երուսաղեմացին, Եփրեմ Ասորին, Հովհաննեսի երերանը, Պրոկոպը, Հիպակուստը, Թեոփիլոսը, Եղիշեն, Մովսես Քերթողահայրը, Զաքարիա կաթողիկոսը, Հովհանն Օձնեցին, Ստեփանոս Մյունեցին, Մամիկոնյանը, Ներսես Շնորհալին, Հովհաննես Սարկավագը, Հովհաննես Տարոնացին, Անանիա Նարեկացին, Գավիթ Քորայրեցին, Գրիգոր, Սարգիս, Պողոս, Քերոր վարդապետները, Հովհաննես վանականը, Վարդան Արեկեցին և անանունք:

Մեզ հասած Տոնապատճառները զգալի տարրերություններ ունեն մեկը մյուսի նկատմամբ: Լավագույն դեպքում Տոնապատճառները կարելի է խմբավորել, նկատի ունենալով դրանց բնագրագիտական սերտ առնչություններն ու բնդհանրությունները: Այս առումով ստորև տալիս ենք Մաշտոցյան մատենադարանի № 2021, 2039, 4139 Տոնապատճառներում, որոնք բնդհանուր առմամբ ներկայացնում են նշված խմբերը, բնդգրկված նյութերի ցանկերը, Հոգվածի բնձեռած հնարավորությունների սահմաններում Տոնապատճառի բո-

25 Ի դեպ, նույնն է վիճակը նաև Հույների համապատասխան եկեղեցա-ծխական ժողովածուներում, որոնք հիմնականում մեր վերոհիշյալ ժողովածուների նախատիպերն են, մասմաս նաև մի քանիսի հիմքերը: Հատկապես նյութերի ընդունակամբ զղալի բնդհանրություններ ունեն Մինաս, Մեսոլողիս, Էորթուղիս և Սինարսարիս ժողովածուները: Հետապայում դրանցից մի քանիսը, նույնպես ենթարկվելով տարրեր խմբագրությունների, փոփոխվել, միացվել և երրուն ներյացվել են: Այսօր ձեռագրերում և տպադիր հրատարակություններում վերջիններս այդպիս է, հանդիս են գալիք և առանձին, և միացված: Տե՛ս Ա. Արամեակի Մաշտոց, Էլլերուն, Եղանակածածեա, շու. 17., տէ. 139, շու. 1A, տէ. 292, շու. ԿԲ', տէ. 550. A. History of Byzantine Music and Hymnography, by Egon Wellesz, Oxford, 1962, էջ 135—136, 195.

վանդակության ու կառուցվածքի մասին ընթերցողին ավելի հստակ պատկերացում և ծանոթաթայն տալու համար:

Ni 2021

[Առաջին Գաւրի մարզաւելին և Յակոբայ].—[պահպանվել է միայն վերջին  
մի քանի տաղը] 4ա:

Պատճառ տօնի նախավկայ] Ստեփաննոսի-Աստուածազարդ շուր տօնիս  
լուսակազմն...12ա:

ի տօնի Փեսարուի և Պատղոսի—Յանտռածարար սրբնշելեացն բազումք  
Են...19ա:

Ե առնի Յովիանու և Յակոբյ՝ Արդյոցն Արտաման—Աստուածահրաման  
պատուէր ունէր... ՀՀ:

შათნათ ბერნებან և კაյონიტებან ნივალით—ტურ ასთოაძადვიდ  
ნორ არარგუმენტ... 29:

Պատճեն «Գրիսոս ծնեալ» նախին-Աստուածայականոթեանս խորհուրդ...  
38ա:

Պատճառ սուրբ ավետարանին Մարքոսի՝ ասացեալ Ներսիսի կարողիկոսի—Բնութիւնը արարածոց իմանալեաց 49ր:

Աւտարան բառ Մարքոսի, «եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեղդահիմ Հրեաստա-  
նի»—Դախ գժամանակն ծննդեանն... 57ր:

Վասն Տարեմտին վաճական վարդապետի ասցեալ—Յորժամ աստուած դՄուլսէս ի լեռն եհան... 62ա:

Պատճեն առաջարկին պահոց—Յոլովք են բանք վասն այսր պահոց... 68ր:  
Ի վեարուարի ամսոյ, որ ԴՓ խորհութեա տեառնընդառաջին, ժողովին ի

մասրան —ի զալ մեծի թագաւորի... 70ա:

ծի... 75ր:

Եւեռող կիւրակէին... «Մի՛ համարի՞ք երէ եկի լուծանել»—Յաւուրի բա-

բեկենդանին... 82ր:

Նորին՝ եւկուրդ կիւրակէին պատճառ—Ամենայն քառասնորդացսի պատ-

Հառ... 86ր:

Զույգը կիւրակէին պատճառ—Անքնդհատ զոլով ճանապարհացի արգա-

Պատման նինգերող կիւռակեին—Ահաւոր եւ մեծ է խորհրդոյն զարու

Տիւն... 101 ա:

Տեսակին առաջելոյն—Այսուհետեւ, եղբարք իմ, որպես լեռուր ի տէր...

Տեսութիւն նաշոյ աւետարանին—իբրև Հարցաւ ի փարփառցոց... 106թ.

Պատճառ լից կիրակելին—Այն որ նախ քան զստ... 109ր:

Մեծի հինգշաբթին պատճառ ի բանն առավելուն—Այսր առուր սահմանեաւ... 117ա:

Յանու մեծի ուրբարուն շարշարանց տեսուն աստուծոյ մերոյ—Ռոպէ՛ս և զի՛ մեծ են գործք քո տէր... 141ա:

Յաղազ նեազալուցին խորհրդոյ սաղմոսաց և բովանդակ պահոց—Զի որովէս զգալի արարածքս յաւելածով հասին... 156ր:

Սակրս պատճառ յարութեան տեսոն՝ ի Սարգսէ առեալ—Մարդ, որ յուսով է հաստատեալ, նա է մարդ... 160ր:

Պատճառ բանիցն Գրիգորի Աստուծաբանի, որ ասէ. «ի պահու խմում կացից»—Յատ համբառնալոյ տեսոն մերոյ... 163ա:

Երանելոյն Յոհաննու Ռոկերեւանի Մեկնորին Գործոցն—Շնորհ խնամոցն աստուծոյ... 171ա:

Պատճառ նոր կիւրակէին և ամետարանացն կարդացման—Ռմն լիմասունցն ասացեալ է... 178ա:

Պատճառ թ զալըստեանն և ամպաչու նանապարհին—Եղիցին զօտիք ձեր պնդեալ... 180ա:

Վասն համբառձմանն—Ամենայն տօնք տեսոն... 183ա:

Վասն իջման նոգոյն սրոյ ի վերնատանն յառաքեալսն—Բարի է աստուծ և բարոյ ամենայնի... 194ր:

Ի խորհուրդ տապանակին—Եւ արար Բերսէլիէլ զտապանակն յանիփուտ փայտ... 199ր:

Վասն վարդավառին—Երեկի արեղակն ի ծագելն իւրում... 205ր:

Վասն վարդավառին—Ռորախ լեր երիտասարդ ի մանկութեան քում... 206ա:

## N 2039

S O N A ♀ A S D W F

[Առաջին Գաւրի մարզաւէին և Յակովայ...]<sup>26</sup>—Եւ զզացաւ տէր, զի թագաւորեցոյց զՄատուղ... 5ա:

Յովհաննու Ռոկերեւանի և Արանասի և Պրոկոփի, Ներտառոյ Կոնստանդինոսի հայրապետի ի սուրբ նախասահպատակն Ստեփանոս ասացեալ—Զգալի արեգականս զերկնաւս ծագելով... 13ա:

Մասնաւոր ինչ ի զիւտ նշխարացն սրոյն Ստեփանոսի և որք բնդ նմա. Դամաղիէլ Օրէնսդիրն, որ ի զործ առաքելոցն բարտք խրատեաց զիւէայսն, և զնիկադիմուն, որիշ է. ի շրոյ և ի նոգոյ ասաց զարժայուրին բնդունել՝ Ներտառի ասացեալ—Զի որովէս ի գործ առարելոցն... 21ա:

Յանանէ վարդապետ ասացեալ ի խաչելուրին Պետրոսի—Իսկ Պետրոս երկրորդ Աղամ... 25ա:

Ի յիշատակի Պետրոսի և Պօղոսի՝ ի Յովհաննու ամետարանի մեկնուրենէ—Ասէ ցնոսս Յիսուս... 27ր:

Յովհաննու Ռոկերեւանի՝ Գործոց մեկնուրենէ՝ Յաղազ Յակովայ՝ եղրօն Յոհաննու—Քնդ ժամանակս ընդ այնոսիկ... 29ր:

Պատճառ սուրբ ամետարանին Յովհաննու՝ ի Յովհաննէ Ռոկերեւանէ—Արք արտաքին հանգիսիցն... 31ա:

<sup>26</sup> Խորազիրը բերվում է ըստ ձեռագրի սկզբում դրված ցանկի:

Մեկնորին աւետարանին Յովհաննու—Դարձաւ Պէտրոս և տեսանէր...  
33ր:

Չորից զլխաւուաց տօնից, որ են արոն կարգեալ չուելկերսկեան. Մար-  
զարէն Դափր և Յակովը առամեալն, Սուրբ Ստեփանոս և հաւատոյ ամոլքն՝  
Պետրոս և Պողոս և Արուման ուղիբն Յովհաննէս և Յակովը Պողոս—Արդ՝ սրանշե-  
յատես մարդաբէն... 34ր:

Սուրբ վարդապետացն ասացեալ՝ վասն յայտնորիեան և ծննդեան տեամ  
և հաւատոյ հաստատորիեան՝ ընդդէմ եւկարնակացն. վկայաբանութեամբ  
Տեամնեղրօց Յակովը և Կիւղի Երուսաղէմայ հայրապետին—Յորժամ որ  
կամիցի շինուածու... 37ա:

Յեկեղեցական պատմութենէ, զոր եւկրուդեալ է Սարկաւագ վարդապետի—  
ի յարութենէն Քրիստոսի... 39ր:

Սամուէլի և Պողոսի և այլոց վարդապետաց՝ Վերլուծութիւն ընթեցուածոց  
գրոց—Արդ՝ բազումք ի վարդապետաց... 41ա:

Իմասցուի և վասն խորհրդոյ առուր նրազալուցիս, որ սկիզբն է և արտա-  
ժոյ ուրօնեայ բույն և ի թիւ պահոց զկարգ կանովնին ունի—Աստուածաբանն  
Գրիգորիոս... 42ր:

Յաղագս ծննդեանն Քրիստոսի և ներս ի յայրին առ Մարովն—Արդ մտա-  
նելով ի ներքու... 43ր:

Իսկ ի կատարմանն Դանիէլի ընթեցումն, որ վասն նարուզողնուուայ  
յազգաւորին Քաղղէացոյ—Պատկէր կանդնեալ... 48ա:

[Պատճառի առուց արարշութեան]—ի յայտնութեան առաջի առուրն. յա-  
ռաջին առուր արարշութեան... (Ճեռագրում յուրաքանչյուր օրվան նվիրված է  
առանձին խորագիր)... 49ա:

Յաղագս Պետրոսի և Արիսողումայ յիշատակի. եւ թէ վասն է՞ր զկնի Աս-  
տուածայայտնութեան առուց զյիշատակ Պետրոսի հայրապետի և Արիսողում-  
այ սարկաւագի տօնէ եկեղեցի Քրիստոսի, եւ զկնի զմեծի Անտովնի և ապօ-  
գքազաւորին Թէորուոսի—Այսպէս ուսաք յաւանդութենէ... 69ա:

Յաղագս բառանօշեայ զալստեան տեառն ի տաճարն—Պարտ է զիտել...  
70ա:

Պատճառի առաջաւորի պահոցն—Բազում պատճառք... 75ր:

Յաղագս բառաներուդաց պահոցն—Մերձհալ արքայութիւն... 78ա:

Վասն եւայիսայրիցն ընթեցուածի մեկնութենէն—Ամենայաղի ո. նշանն...  
80ա:

[Խորհուրդի առուցն աղումացիցն]—Ոմանք այսպէս ասացին... (Ճեռագրում  
յուրաքանչյուր օրվան նվիրված է առանձին խորագիր)... 80ր:

Վասն յարուրիան Պազարու ի շարարու—ի վեցերորդ շաբաթուս... 133ր:

Մեկնորին աւետարանի—եւ էր մերձ զարեղական... 137ր:

Ի մեծի առուր տօնի սղողումնից, որ կոչի օրինեալ օր և ի զալուստ տեառն  
յերուաղէմ—Յելանել նորտ... 138ր:

Արժաւենեաց տօնին—իսկ արմաւենեաց առուր... 148ա:

[Խորհուրդի Ասագ շարարու առուցն]—իսկ Զատկի շարաթուն... (Ճեռա-  
գրում յուրաքանչյուր օրվան նվիրված է առանձին խորագիր)... 149ր:

Ասացեալ ի բաղումն տեառն—Այս մի Յովսէփ, որ էր նախարար... 190ա:

Թէոփիլոսի՝ աշակերտին Յովհաննու՝ Վասն զեւեզմանի տեառն—Նոր եր-  
կինք այսօր... 190ր:

խորհուրդ մեծի շաբարին նրազալուցի առուն և տեսուրին նորին—Արդ՝ զպատիւ առուրս... 193ր:

Ի յարուրին Քրիստոսի և ի ս. պատեմ—Յակովը նահապետն յորժամ... 199ր:

Եսկ մեծի առու պատեմին յերրորդ ժամուն ժողովին ի սուրբ յարուրին և սկսանին ասել—Ահաւոր և սրանշելի... 200ա:

Ի խորհուրդ նոր կիւրակէին—Նաւակատիք ասի... 202ա:

Վասն շաբարին և նորին խորհրդոցն—Յիշեսիր դու, ասէ, զօրն... 205ր:

Հարցումն. զի՞նչ խորհուրդ է յիսուն օր պահի... Պատասխանի—Յորժամ յաստուծոյ... 207ր:

Յաղագս որ յետ յարուրիան տօնեմ զյիսուն օր. զնոյն առանց պահոց և ծունը դնելով կատաւեմ նանդերծ շորբ աւետարանչօցն—Յուցանէ մեղ զպարհանային... 208ր:

Ի համբարձումն տեառն—Ամենայն տօնք աստուածայինը... 209ա:

Պատման եւկրորդ զալստեան տեառն—Զտօնս զայս տօնեն... 215ր:

Վասն զալստեան սուրբ հոգույն—Առաջինս և վերջինս... 217ա:

Յաղագս նախանացն—Նախահարր ասին... 222ա:

Յաղագս սուրբ մարգարէիցն—Թանգի պարք մարգարէիցն... 223ա:

Յաղագս Յովիաննու Մկրտչի՝ Անանիայի վարդապետի ասցեալ—Ի ձեռն տեալ զիմաստս... 225ր:

Մերոյն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասցեալ Վասն նախերգանի աղօրիցն, որ կատարի ի զիշերի—Ուրագէս նեղեալ որ... 229ր:

Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասցեալ Յաղագս եկեղեցօրհնեացն կուրզաց, թէ զինչ է խորհուրդն—Վէմն անտաշ և անկոփ... 230ա:

Նորին] խորհուրդ և կարգաւորուրին եկեղեցոյ—Ուրախ լեր եկեղեցիս... 231ա:

Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և այլոց վարդապետաց Ի խորհուրդ Ելեղեցոյ—Նաւ է եկեղեցի... 236ա:

Յաղագս տեառն ի խաչ ելանելոյն ի ժամուցն—Խորհուրդս այս մեծ... 244ա:

Յաղագս տապանակին—Եւ արար Բհսելիել... 245ր:

Վասն երից բառասնից նաւակատեացս, զի ոչ զոյ մասկերուրին ի մէջ ժիշտոննէից աղոմացիցն ամառան և յիսնակաց և ի մեծի տեառն շարշարանաց առուրա—Նաւակատիքս բարձրագոյն... 248ա:

Պատման վարդապետի տօնին—Վասն էր Յակովոս... 249ր:

Մեկնուրին Առակացն Սողոմոնի—Յազում ինչ իրօք Սաղովմոն... 260ր:

Վասն սուրբ առաքելոցն Քրիստոսի—Մքանչացաւ տեսողն և ասէ... 266ա:

Ներդողեան զովեստ նամօրէն զնից սուրբ առաքելոցն Եւկոտասանիցն. նախապատիւ պետացն զիստուրաց—Անթառում սիրոյն ծաղիկը... 271ր:

Յաղագս երանասուն և եւկու առաքելոցն—Ղամէր, որ յետ սպանանելոյն... 275ա:

Վասն երանասուն և եւկու սրբազն աշակերտացն Քրիստոսի—Իսկ յիշանասնիցն ճառը... 277ր:

[Վասն աւետարանչացն]<sup>27</sup>—Ի նախնումն և յառաջին լինելութենէ... 282ր:

Մեկնուրին խորանաց աւետարանին—Առաջին խորանն շորս դեղօքն... 287ր:

<sup>27</sup> Բուն խորագիրն այլ է. ընդունեցինք ստորին լուսանցքում կրկնվող խորագիրը, որովհետեւ բովանդակությանը համապատասխանում է վերջինը:

Զաքարիայի հայոց կարողիկոսի և Մովսէսի Քերողի ասացեալ ի փոխումն Աստուածամօռն և պատկերի նորին—Արարիշն արարածոց... 288ր:

Վասն պատկերի Մըրումայն—Հրամիրեալ լինէր Աստուածամայրն... 293ր:  
Ի Պուկասու աւետարանէն ասացեալ—Եւ ել հրաման յօդոստոս կայսերէ...  
296ա:

Պատճառ «Առոր աստուածին», որ հայք «խաչեցար» աւեն և հերձուածութն՝  
ոչ «Առոր աստուած, սուր և հզօր, սուր և անմահ, որ խաչեցար»—Սրբասա-  
ցութիւնս այս... 301ա:

Պատճառ սրբոյ խաչին—Աշենայն բարեկամի և սիրելոյ... 305ր:

Ի սուր խաչն փրկչական-Եւ ձգեաց Մովսէս պատաղանն... 310ա:

Վանական վարդապետի ասացեալ Յաղագս Տարոյմային—Առ ու ուժով  
իմաստնացեալն Սաղովմոն... 311ր:

Մեկնուրիւն Առակացն, որ վասն Տզրկին—Տզրկին երեք դուռերը էին...  
314ր:

### N 4139

#### ՏՕՆԱՊԱՏՃԱՐ

Իւասն Գաւրի և Յակոբայ]—Սկիզբն տօնից և հոգեոր ուրախութեանց...

1ա:

Սրբոյն Ստեփանոսի նախավիկայ[ի]—Աստուածապարդ շուր տօնիս... 7ր:

Շետրոսի և Պօղոսի—Յաստուածարար սրանշելիացն բաղումք են... 13ր:

Տովհաննու և Յակոբայ[ի]—Աստուածաբարմատին պատուիր ունէր իսրայէլ՝  
զսկիսրն տօնին... 18ա:

Յաղագս յայտնուրեան նրազալուցին—Բատ արարշտպործ նորոյ արարշու-  
թեանս... 23ա:

«Քրիստոս ծնեալ» նաոին պատճառ—Աստուածայաշնութեան խորհուրդ...

30ա:

Նախերգան յաղագս խորանաց աւետարանին Մարէոսի—Մատենաք աս-  
տուածապիծք... 40ա:

Պատճառի և թելադրուրին շուրից աւետարանացն, թէ ուռիս գրեցան և  
յորդան ժամանակո և թէ ուռիս ի օրինօֆ յառաջինսն խորհուրդ նոցայ եւենիւ  
և զայր—Յարմելո, ասի, անկել զդրուխուն... 45ր:

Ներսիսի կարողիկոսի ժողովեալ] Մեկնուրիւն աւետարանին Մարէոսի ի  
խնդրոյ նորուն եղրօն Գրիգորիսի՝ առաջին վերադիտողի նայոց—Սիրոյ դաւ-  
րութիւն զերազանց է... 51ա:

Պատճառ սրբոյն Տովհաննու Կարապետին—Բաղմադիմի են ճանապարհ  
իմաստութեան... 62ր:

Յիշատակ Պետրոսի հայրապետի Աղեխանդրու և Սրիսողումի—Եթէ զինէ  
պատճառի այսր երեք տօնք... 73ա:

Պատճառի առաջաւորաց—Յոլովք են բանք վասն այսր պահոց... 74ր:

Խորհուրդ տեսանքնդառաջի—Ի փետրուարի ամսոյ, որ օր Դժ... 76ա:

Յաղագս բարուց՝ Պօղոսի, Սամուելի, Գրիգորի Վասն աղոմացից—Խոր-  
շուրոց եկեղեցւոյ նման են զանձի... 81ր:

Պատճառ եւեղուրդ կիւրակէին—Արդ՝ զոր ինչ ընթերցմունք են այսր ա-  
ւոր... 89ա:

Պատճառ եղբորդ կիւրակէի—Սքանչելահրաշը են խորհուրդը միաշաբաթու աղուցացիցն... 89ր:

Պատճառ շորորդ կիւրակէին—Սքանչելահրաշ համեմատութեամբ կապէալ... 91ա:

Տեսուրին աւետարանացն, Տեսուրին Մարգարէին խաեայ. 91բ:

Տեսուրին առաջելոյ, Տեսուրին նաշոյ աւետարանին, 92ա:

Պատճառ նինզերորդ կիւրակէին—Ահաւոր եւ մեծ է խորհրդոյն այս դօրութին... 92բ:

Կարգ ի խորհրդածուրին վեցերորդ կիւրակէին—Մհծաղօր արարշական հրաշագործութինը... 94ա:

Յաղագս ուրբարի եւ շորենշաբարի—Բովանդակ իսկ քառասնորդացս ուրբաթի և շորերշաբաթի... 96ա:

Կանոն առաջին ուրբարուն-Կերպարան ընթերցւածիս ցուցանէ... 98ա:

Յաղագս Բ-որդ շաբարուս, այլէ՝ ձե կանոնի—Այսր շաբաթու կանոն ի ուրբար Յարութին կատարի... 100ա:

Կանոն եղբորդ շաբարին աւուրն—Եւ նստաւ կինն և սնոյց զորդին իւր... 101ա:

Կանոն աւուրն շորորդ շաբարի—Այս կանոն ի Սիոն կատարի... 101բ:

Կանոն նինզշաբարին աւուրն—Եւ այս կանոն ի Յարութեան կատարի... 102ա:

Կանոն ուրբարուն—Եւ սոյն ևս աւուր կանոն ի Սիոն կատարի... 103ա:

Կանոն եղբորդ շաբարուն շորենշաբարին—Եւ այս կանոն ի Սիոն... 104բ:

Կանոն եղբորդ ուրբարին—Աստանաւր զգուշացուցանէ զապաշխարողսն... 105բ:

Կանոն շորորդ շորենշաբարին—Արդ՝ երթեալ ժողովեսցես ղձերակոյտ... 107ա:

Կանոն շորորդ ուրբարին—Եւ եղեւ յետ և տուրնշեան և լո գիշերոյ... 108ա:

Կանոն նինզերորդ շորենշաբարուն—Եւ աստ առնու Մովսէս յաստուծոյ... 109բ:

Կանոն նինզերորդ ուրբարին—Ի ժամանակին յայնմիկ առէ ցիս տէր... 110ա:

Կանոն վեցերորդ շորենշաբարին—Եւ առէ տէր ցՄովսէս... 111բ:

Կանոն վեցերորդ ուրբարին—Քանզի երկիրն, յոր մտանելոց... 112բ:

Վասն վեցերորդ դարուն—Դիտելի է և այս, զի մեծն Աբրահամ ի ծերութեան... 114ա:

Կարգ և խորհուրդ յարութեանն Պազարու—Այս տօն, զոր կատարէ եկեղեցի ի շաբաթու... 116ա:

«Էր ուն նիւանդ Պազար»—Բազումք ի մարդկանէ յորժամ տեսանեն... 119ա:

Խորհուրդ յաւանակաւ գալրատեանն տեառն յեռաւալէմ—Զոտոր արմաւնեացս օր, զոր և օրէնեալ անւանեցին... 130բ:

Ի բանն որ ասէ. «Եւ զան յերիբով», աւետարան ըստ Մարկոսի—Զմեծասքանչ և զափեզերածագ ծագումն իմանալի... 134ա:

Կանոն մեծի երկուշաբարին—Այսր շաբաթու պահք մեծի պասերին... 145բ:

Ի սկիզբն Արարածոց մեկնութեան, ոոր արարեալ է սրբոց վարդապետաց—Սկիզբն իմանալոյ ի մեզ վասն լինելութեան... 147ր:

Ի քանին, ոոր ասէ. «Եւ ասաց աստուած արասցու մարդ ըստ պատկերի»—  
Բնութիւն է այս տնկեալ յայգուց\* յուժ բաղձանօք... 154ա:

Կանոն մեծի առու Եւելշարարի—Ըստ կարգի առաջնոյն... 160ր:

Կանոն մեծի չուելշարարի—Երևացու աստուած Արքահամու... 162ր:

Ի քանին Պօղոսի, ոոր ասէ. «Քրիստոս զնեաց զմեզ յանիծից օրինոցն»,—  
Ասէ աստուածային բանն... 164ա:

Յայտարարութիւն խորհրդոյ մեծի նինգշարարին—Այսմիկ առուր սահմանեալս կանոն... 166ա:

[Պատման առ կանքացիս բղրոյն Պօղոսի]—Արդ այս թուղթ երբորդ է ըստ  
կարգի... 168ա:

Տեսն Եփեմի ասացեալ [քան] խորհրդաւոր—Զուարթունը ու աղտեղացն... 173ր:

Կանոն մեծի ուրբարի շարշարանացն տեսան—Զկնի մեծի երեկոյի հնոյն...  
175ա:

Յեսա[լ]եա[լ] ի խորհուրդ մեծի ուրբարին, ոոր արարեալ է սրբոյ և զերա-  
նեաշ վարդապետին տեսան Լամրոօնոյ—Աստուածայինին խորհրդոցն հազարա-  
միւտն... 178ա:

Թէ զինչ խորհուրդ յայտնէ նրազալուցին առաջին սաղմոսն եւ կամ զինչ  
նոկման եւերուրդ սաղմոսն, եւ կամ զինչ թժ ընթեցուածն, եւ զիարդ օրինա-  
կաւ առաջաւորի պահոցն եւ բառանորդացն զիսաւեալ է իր սկսմամբ և  
կատարածիւ—Զի որպէս զգալի արարածք... 192ր:

[Յաղագ] յարուրեան տեսան—Արդ՝ յարութեան խորհուրդ մեծապատիւ է  
և Հրաշալի... 197ա:

Վասն կիւրակէի, ոոր է միաշարար—Արդ ասասցուք զմիաշարաթին...  
199ա:

Սրբոյ վարդապետին Գրիգորի՝ Ի սուրբ զատիկ և ի կենսարե յարութիւն  
տեսան. միաբանութեամբ աւետարանշացն բանից և բացայալուսն կանանց  
նողարեւից—Այսօր յարեաւ Քրիստոս ի մեռելոց և յարոյց ընդ իր... 200ա:

Վասն յիսներուրդ առու յարուրեան—Առաջին յիսներորդի աղուհացից պա-  
հոցն... 216ա:

Մեկնութիւն սրբոյ աւետարանին Յոհաննու «յիսկըրանէ [էր] քանն»—ի  
սկզբանէ էր բանն... 217ր:

Յաղագ նաւակաւեացն՝ ե[ր]ը [լ] ինին, ոոր արարեալ է սրբոյ Գրիգորին  
Աստուածարանի—Ի կատարման աստուածայնոյ տնօրէնութեան... 223ա:

Ի նեղզութիւն—Յորժամ զայր Գրիգոր յԱթենս... 227ր:

Պատման «ի պահու իմում կացից»—Երանելի սուրբ Հայրապետը... 228ր:

Յաղագ է առուն առաջուրեան, ոոր արարեալ է սուրբ վարդապետին  
Վարդանայ—Անդրանիկ օրս միաշարաթուս... 235ա:

Պատման տօնի աշխարհամատրանն, երէ վասն է՞ր յայս առու կատա-  
րի, սուր ինչ ի Գուրայ յաւելուած յառաջնոցն բանս—ի շինելն Կոստանդիանո-  
ւի Մեծի զերուսաղէմի եկեղեցիսն... 240ր:

\* Բնագրուժ՝ յոզոց:

Յաղաց վերացման տեսոն, ի Գուկայ աւետարանէն—Եւ մինչդեռ տակաւինչ հաւատային... 244ր:

Յայլ գրոց վկայութիւնք յաղաց վերացման տեսոն և ամպաշու նանապարհին—Ամովսակսնն որ ասէ... 249ր:

[Յաղաց] Համբարձման տեսոն—Յամենայն տօնս տէրունիս... 249ր:

Յաղաց Եւերուրդ զալստեան և ամպաշու նանապարհին—Եղիցին գօտիք չեր պնդեալ... 252ր:

Ի սուրբ և ի հրաշափառ իշումնն] նոգոյն սրբոյ յերշանիկ դասս առաժելոցն—Բարի է աստուած և բարոյ ամենայնի արարիշ... 254ր:

Յաղաց նոգոյն զալստեան փոքր ինչ պատճառ—Յառաջին ժամանակս, ի միջինս և ի վերջինս միենոյն է խնամք... 258ր:

Խորհուրդ նիմնարկութեան եկեղեցոյ—Ժողովք աստուածալին քահանապետն ի տեղին... 265ա:

Կանոն նաւակատեաց օրինութեան եկեղեցոյ—Մտանեն երեկոնին ի հրակումն... 266ր:

Յաղաց նաւակատեաց եկեղեցոյ, որ զինի Պեճակոստին Ի-ն Տրէ ամսոյ, որ Հայաստանեաց տօնէ եկեղեցի. ի Դաւթայ շարագրեալ զաւանդս իմաստնոց—Ի բազմաց զանազանից կարծեաց... 270ա:

Յաղաց խորհրդեան եկեղեցոյ—Բարերանեցէք զաստուած յեկեղեցիո... 273ա:

Յաղաց տապանակին խորհուրդ—Եւ արար Բեսելիի զտապան... 280ր:

Յաղաց տօնի վարդապատին—Երեկի արեգակն ի ծագելն իւրում... 285ր:

Այլ պատճառ—Արդ՝ զիրք սուրբը ասեն... 292ր:

Յաղաց տօնի վարդապատին—Աւղեգնացք ի ճանապարհո շատ ինչ տեսանեն... 294ա:

Յաղաց Շողակարին՝ սուր ինչ պատճառ բանից—Անդրդելի Հիմն Հաստատութեան... 300ր:

Ի ննջումն աստուածամօրն—Ի զերեղանց լուսոյն պայծառացան... 305ր:

Եւ յամսեանն վեցերուրդի առաժեցաւ Դարբիէլ նրեշտակ աստուծոյ ի բայդ մի զալիլեացոց, որում անուն էր Նազ[արէր] առ կոյս խօսեցեալ առն—Ամիս վեցերորդ զնիստն կոչէ... 312ր:

Յաղաց եկեղեցոյ, յԱռակացն Սողոմոնի—Աստուածային իմաստութեամք... 317ր:

Եւ եկեալ Յիսուսի ի կողմանս Փիլիպեա Կեսարեան—Պարտ և արժան է իմանալ... 323ր:

Ի բանն, որ ասէ. «Այլ Քրիստոս եկեալ բահանայաբետ» Վարդանայ սրբոյ վարդապետի արարեալ—Ի զերեղանց լուսոյն պայծառացան արարածք... 327ր:

Յաղաց տօնի սրբոյ խաչին եւ նորին նաւակատեաց, որ ի ԴՓ-ին կատարի ուսպանքերի ամսոյ, ի փառս աստուծոյ—Ի ժամանակս Մէծին Կոստանդիանոսի... 334ա:

Ի տօնի սրբոյ և փառաւոր խաչին Քրիստոսի, ի բանն Դաւթի, որ ասէ. «Օրէնքան և աստուածազարդ և Քրիստոսապահ փայտ»—Ամենայն բարեկամի և սիրելոյ... 343ր:

Ի բանն աւետարանին Ցովհաննու սիրելոյ և աւետարանչի—Եւ նորու տոեալ տանէին զնա... 350ր:

Յաղագս որ «զուրք աստուածն» Երգեն յեկեղեցիս Հայաստանեացս «խաչեցար» ասելով—Վասն որդուն աստուծոյ սրբասացութեան... 355ա:

Տէր զլուր նո լուա և երկեա—Զարդ գեղեցկութեան երկնից... 361ր:

Սուրք վարդապետին Վարդանայ արաւեալ ի բանս տեանն. «Հայր մեր, որ յերկինս»—Ի տես եղանակաց, զոր արար աստուած... 367ա:

Կիրակոսի սուրք վարդապետի արաւեալ ի սաղմոսն ձԹ, որ ասէ. «Ասաց աէր ցուէր իմ, նիստ ընդ ազմէ իմմէ մինչև եղից»—Կանուխ և ամէնիմաստ գիտութեամբ իւրով աստուած... 372ա:

Ի Յայտնութեանցն Յոհանու, Մեկնուրին Անդրէի և Արէրոսսայ եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկեցւոյ Վասն խոռվութեան եկեղեցւոյ, յոր ի սկզբանէ և որ ի ձեռն ներինն, զոր յաւելեալ սուրք վարդապետն Վարդան—Եւ բացու տաձարն աստուծոյ, որ յերկնինս... 378ր:

Նախերգան սոյն ասացուածոյ Վարդանայ վարդապետին ասացեալ—Գլուխ սիատուիրանացն աստուծոյ... 386ա:

Եռին վարդապետի արաւեալ ի Եռընքացւոց առաջին բղրոյն, որ ասէ. «Գոհանամ զատուծոյ վասն ամենեցուն ձեր: Առաւել լնզօֆ խօսիմ, այլ ի մէջ եկեղեցւոյ կամիմ բանս Ե մտօֆ խօսել, զի զայլս խրատիցեմ, Տան զրազում բանս լեզուաւ խօսել—Արարշագործն աստուած Հոգին ճշմարտութեան... 387ա:

Յառաջին բղրոյն Թեսաղոնիկեցւոց. «Ոչ կամիմ, եղբայր, երէ տղէսք իցէլ վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցի՛, ուսկս և այլքն, ուոց ոչ զոյ յոյս»—Գլուխ բրիստոնիւթեան... 395ա:

Գրիգորի սբանչելազորդի» (հարցականը բնագրային է, մերը չէ—Փ. Ա. Դան—Ծվ սնոտի ասէր, խախուտամհծար, դաւողագեցեր... 409ա:

Պատճառ Հռոմայեցւոց բղրոյն Պօղոսի առաքելոյն—Բազումք Հաւատացին ի Քրիստոս... 411ա:

Այլ պատճառ առաքելական բղրոցս—Յաղագս թղթոց առաքելոյն այսպէս իմանալի է... 412ա:

Դէռգայ մեծի գիտնականի Կաղն կոչեցելոյ՝ Յաղագս շարակարգութեան Դժ բղրոցն Պօղոսի—Արդ՝ թուղթն Հռոմայեցւոց... 412բ:

Այլ օրինակ խորհրդածութեան բղրոցս նոյն Դէռգայ ասացեալ—Ա՛յ թէ վասն էր Հռոմայեցւոց թուղթն յառաջազոյն եղեալ է... 414ա:

Այլ համեմատութիւն զուգամասն բղրոցդ, նոյն Դէռգայ ասացեալ—Են և այլ իմն զնացք թղթոցդ... 415ա:

Ի Եռընքացւոց առաջին բղրոյն—Ասպայ է, թէ Քրիստոս քարոզի... 420ա:

Այլ զի ուսցիս, թէ վասն այնր ժամանակի խաւսի—Յորժամ տացէ զթառաւորութիւն աստուծոյ և հօր... 425բ:

Պատճառ բղրին, որ Առ յերշեցիսն—Ի սկզբան թղթոյս աշաւրիկ ծուփ և ինդիր... 429ա:

Ի Փիլիպեցւոց բղրոյն—Զայր խորհեցի իւրաքանչիւր ոք... 435ա:

Ի բանն, որ ասէ. «Ռոնել ունէր, և առաջինն յերշեցւոց»—Բազմաց ի Երշեցւոցն... 439ա:

Ներշեցւոց բղրոյն—Այսուհետեւ ունիմք Համարձակութիւն... 446ա:

Ի Կորնքացոց առաջին բղբոյն—Նախ վասն ճշմարիտ քարոզութեան...

448ր:

Ի Հոգմայեցոց բղբոյն—Ինձ այսպէս թուի... 452ա:

Վասն սուրբ առաքելոցն—Մարգարէն սքանչացաւ և ասէ... 460ա:

Վասն սուրբ մարգարէիցն—Թրիստոս տառց՝ ամենայն մարգարէթ... 462ա:

Պատմառք մարտիրոսաց—Յորժամ լուսաւորին Հարք հոգեարք... 464ա:

Յաղագս նախահարցն—Նախահարք ասին Արքահամ... 467ա:

Յոհանու աւետարան Եղաքերիցն—Յետ այսորիկ, յետ անցիցն... 468ա:

Տոնապատճառների և Ճառընտիրների համեմատությունից պարզվում է, որ մի շարք հեղինակներ, երեխն իրենց միևնույն երկերով տեղ են գտնել ինչպես Տոնապատճառներում, այնպես էլ Ճառընտիրներում: Դրանց մեջ կան նաև անհայտ հեղինակների որոշ երկեր, որոնք վերաբերում են միևնույն հարցերին: XII դ. վերջերից սկսած Ճառընտիրի և Տոնապատճառի միջև տարրերությունները ավելի են խորանում: Տոնապատճառը սկսում է առավել ինքնամփոփ մնալ: Հետեւ որոշակի սեղմ նպատակի՝ հիմնականում տոնների առիթների ու նշանակության և որոշ կրոնական գրքերի «պատճառների» բացահայտմանը: Ընդուրկված նյութերը հազվագետ են շեղվում աչս նպատակից: Մինչդեռ Ճառընտիրները, կաշկանդված վինելով եկեղեցական այս կամ այն սեհուն նպատակով, ընկալում են իրենց մեջ բաղմազան նյութեր (քաղվածքներ պատմիչներից, տեսիլքներ, վարքարանական գրվածքներ, ներբողներ և այլ հրաշապատում դրվագներ), որոնք Տոնապատճառների մեջ մուտք գործել շէին կարող:

Տոնապատճառն ընդհանրապես տեսական բնույթի ու նշանակության աշխատություն է և, ըստ երևույթին, չի ունեցել առօրյա կիրառություն: Այն ավելի շատ օգտագործվել է վանական դպրոցներում ուսուցողական նպատակներում:

Նրա մեջ ես հետաքրքիր ու շահեկան շատ նյութեր կան, որոնք բավարար հիմք են տալիս մեր օրերի պատմաբանին, գրականագետին, լեզվաբանին, ազգագրագետին և, մանավանդ, բանասերին: Այն, իրեւ ժողովածու մեղ հասած ձեռագրերում, մանավանդ հնագույնների մեջ, տարրեր տեսրով ու ծավալվ է ներկայանում: Այս խոսում է այն մասին, որ զրա կազմության և խմբագրման գործում, զոնե մինչև X—XII դդ. ուժեղ, հեղինակավոր ձեռքի միջամտություն չի եղել: Իսկ կասկածից դուրս է, որ մինչև այդ դարերը այդ ժողովածուն արդեն ստեղծվել էր, սակայն ե՞ր:

Մաշտոցյան Մատենադարանի № 1007 Տոնապատճառը, ընդօրինակված XI—XII դդ. ընթացքում, բավականաշատ տարրերվում է ավելի ուշ դրված Տոնապատճառներից, ունի հիշատակարան, որտեղ, իմիշիալից, զրված է: «Եւ մերս (իմա՝ հայկական Տոնապատճառը) բերաւ աշխարհի սրբոյն Ռուստակիսէ, բերաւ յետոյ կարգեալն ի Կիւրդէ: Արդ՝ զուցա բանք առեալ սրբոյ հայրապետին մերս Զաքարիայի և այլ սրբոց վարդապետաց, լուսաւորեցին զամենայն Հաւատացեալս ի Քրիստոս և ցուցին մեղ զտօնս և պատճառ նոցա...»<sup>28</sup>:

Ինչպես տեսնում ենք, Տոնապատճառն ավանդաբար կապվում է ամենից առաջ Արիստակես կաթողիկոսի (IV դ.) անվան հետ: Մեղ հավանական չի թվում, որ նա որևէ առնշություն ունի Տոնապատճառի կազմությանը, բայց այս ավանդությունը խոսում է Տոնապատճառի հնության մասին: Հիշատակարանի տրվ-

28 Մատենադարան, ձեռ. № 1007, լէ 466ր:

յալներով Զաքարիա կաթողիկոսը, որ, անշուշտ, Զագեցին պետք է լինի (աթուակալել է 855—875 թթ.), մասնակցել է Տոնապատճառի ձևավորման ու հոխացման աշխատանքներին, բայց թե ինչպես և ինչշափով, հայտնի չէ: Սակայն ստույգ է, որ հնագույն Տոնապատճառների մեջ կան Զաքարիային պատկանող մի քանի մանր երկեր:

Հիշատակարանները վկայում են նաև, որ Զաքարիայից բացի մի շաբաթ վարդապետներ այս կամ այն շափով մասնակցել են մեզ հետքարքրող ժողովածուի խմբագրման ու հոխացման գործին<sup>29</sup>: Սակայն Տոնապատճառի, որպես ուրույն միավոր-ժողովածուի, կազմությունը բանասիրության մեջ ընդունված է կապել Սամվել Կամբչաձորեցու անվան հետ, ենելով գրավոր աղբյուրներում պահպանված մի քանի հազորդումներից:

Սամվել Կամբչաձորեցին եղել է բանիմաց մատենագիր և հմուտ երաժիշտ: Գործել է Հ դ. վերջերին և XI դ. սկզբներին: Մելիտինինի Թեոդորոս Սետրոպոլիտին իրքի պատասխան գրել է մի թուղթ, որի մասին Մատթեոս Ուռհայեցին հետեւյալն է հայտնում. «Վարդապետն հայոց Սամուէլ գրեաց նորա (Թեոդորոսի—Փ. Ա.) պատասխանի վայելու և ցանկալի բանք, որ եղել իսկ հաճելի թուղթն այն ամենայն լսողացն, ևս առաւել մեծարեալ եղեւ առաջի թեոդորոսի պատրիարքին»<sup>30</sup>: Նա ունի նաև ճառեր: Ասողիկը Սամվելին ճանաշում է որպես «իմաստակն Սամուէլ՝ բազմաշնորհն ի գիտութիւնս գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց»<sup>31</sup>: Սմբատ Սպարապետը, կրկնելով Ուռհայեցուն պատմում է, թե ինչպես Բյուզանդիայի Վասիլ կայսրը Սամվել Կամբչաձորեցուն հրավիրել է «յատենի» վիճարանելու հույն վարդապետների հետ, որոնց պարտության մատնելով՝ նա փայլուն հազթանակ է տարել<sup>32</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սամվել Կամբչաձորեցին պատահական անձնավորություն չէր և կարող էին նրան վստահել Տոնապատճառի կազմության կարելոր ու պատասխանատու գործը:

Սակայն այդ մասին մեր պատմիչների խոսքը, դժբախտաբար, որոշակի չէ: Նրանք ստույգ շեն հավաստում այն, որ Սամվել Կամբչաձորեցու կազմած ժողովածուն հենց Տոնապատճառն է: Ահա թե ինչ է գրել այս առիթով Մատթեոս Ուռհայեցին. «Եւ սկիզբն արար Սամուէլ յառաջին աւուրն յարաշութիւնէ և դայր հասանէր մինչև ցվերջն պատեհեր օրն և զամենայն պատճառ պատճենից բատ առաջին իմաստնոցն հաստատոն կացուցանէր»<sup>33</sup>: Իսկ Ասողիկը վկայում է, «Ար զյիշատակ մարտիրոսացն միաւորեալ ի զիր ամփոփեաց»<sup>34</sup>: Կարելի՞ է, արդյոք, այս հիշատակություններից հետեւյնել, որ Սամվել Կամբչաձորեցու կազմած ժողովածուն եղել է, անտարակույս, Տոնապատճառ և ոչ, ասենք, Հայոմավորք կամ Տոնացուց: Եթե նա իր գործն սկսել է այն բանից, որ արարշության առաջին օրը հիմք է ընդունել և վերջացրել է վերջին օրով և, հիմնականում, «մարտիրոսաց» մասին նշութեր է ամփոփել, ապա ամենի հավանական է ենթադրել, թե նրա այդ աշխատանքը առաջին հերթին առնչվելու է Հայոմավորքին: Չէ՞ որ Տոնապատճառի մեջ տոների կամ նշութերի ամենօրյա

29 Մատենապարան, ձեռ. Ա. 3795, էջ 291թ—292թ:

30 Մ. Աւոհայեցի, Պատմութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 47:

31 Մ. Ասողիկ, Պատմութիւն ամենահական, Պետերբուրգ, 1885, էջ 174:

32 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 21—22:

33 Մատթեոս Աւոհայեցի, Խովանական աշխատանք, էջ 54—55:

34 Մտեփանոս Ասողիկ, Խովանական աշխատանք, էջ 146:

բաժանում շկա, մինչդեռ Հայսմավորքը այդպիսին է հնագույն օրինակներում, իսկ, բացի գրանից. «մարտիրոսաց» վարքագրությունները ևս ամփոփված են ու թե Տոնապատճառի, այլ Հայսմավորքի և մասսամբ միայն ձառընտրի մեջ: Սակայն կա նաև մի այլ ուշագրավ փաստ. հունական Հայսմավորքի կազմությունը սկսել է համեմատարար ավարտուն վիճակ ստանալ վասիլ Բ կայսեր ժամանակ (976—1025)<sup>35</sup>: Այս այն կայսրն է, որ Սամվել Կամրջաձորեցին հրավիրել է մասնակցելու դավանաբանական հարցերի, ուստի և եկեղեցական տոնների ու նման ինդիրների շուրջ ստեղծված հույն դիտնականների վիճարանություններին<sup>36</sup>: Շատ հավանական է, որ այդ առիթով արծարծված է եղինական Հայսմավորքի կազմության հարցը: Սամվել Կամրջաձորեցին, ծանոթակալով բլուղանդական եկեղեցու կողմից օգտագործվող Հայսմավորքին, հայրենիք վերադառնալով, բնականարար, կարող էր քայլերի դիմել այդպիսի մի հայկական ժողովածու ստեղծելու համար, մահավանդ, որ ինչքան մեղ հայտնի է, մինչ այդ Հայսմավորք ժողովածու Հայտառանում գոյություն չի ունեցել<sup>37</sup>:

Այդ դեպքում ինչպէ՞ս պետք է բացատրել «պատճառ պատճենից» վերոհիշյալ արտահայտությունը։ Բոտ նոր հայկագյան բառարանի «պատճեն» բառը, իր սովորական իմաստից բացի, նշանակում է՝ նաև «զլուխ բանի», այսինքն որևէ երկի մի զլուխը կամ բաժինը<sup>38</sup>։ Մեր կարծիքով, հիշյալ արտահայտության մեջ էլ «պատճենից»-ը կիրառված է այս իմաստով։ Ուստի, ամենայն հավանականությամբ «պատճառ պատճենից» ասելով՝ հասկացվել է կազմված ժողովածուի զլուխների կամ միավորների մասին արված բացատրությունները այս կարգի աշխատանքը պատշաճում է Տոնապատճառին, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, քիչ շենք «պատճառները» այս կամ այն տոնի, երբեմն էլ այս լամ այն կրոնական երկի վերաբերյալ։

Առանց այս հիշատակարանի էլ, ինչպես տեսանք վերը, Ս. Կամբջաձորեցու անունը վաղուց արդեն կապվել է Տոնապատճառի կազմության հետ: Ոսկեփորիկի և մեկ հասած «Գրոց ցանկեր»-ի մեջ որոշակի վկայված է, որ «Սամուել Կամբջաձորոյ հայրն արար գՏօնապատճառն»<sup>39</sup>: Կա նաև Գևորգ Մեղրիկ վար-

<sup>35</sup> Η. Λαζαρίδη, Μετατρ. Ελληνικής Επικουροτελείας, τόμ. IA, σελ. 292, τόμ. KB., σελ. 550.

36. If  $p$  is in  $\mathcal{U}_M$  or  $p$  is in  $\mathcal{U}_L$ ,  $\text{Int}_p$ ,  $\text{Int}_L$ ,  $b_2$  21, 22;

37 Այս կապակցությունը կարևոր է նկատել, որ 991—992 թթ. Հովսեփ Կոստանդնուպոլիսից հումարենից թարգմանել է մի յուրովի Հայութավուրբ Բնական է, որ դրա բնդրյալ նյութերը բացառապես պիտի վերաբերենին հումական եկեղեցու կողմից բնդրուված սրբերին (այդ թվում նաև Գրիգոր Լուսավորչին և Հոխիսիմեանց): Պահպանված հիշատակարանի վկայությամբ թարդմանությունը կատարվել է հիշյալ նյութերը ժողովրդին ծանոթացնելու համար, կնշանակի՝ մինչ այդ դրանք անձանով են եղել: Եթե թարզմանական այդ երկը իրար Հայութավուրբն է եղան, ինչպես կարծել են ն. Ակինյանն ու Հ. Անկյանը (անգ' Ն. Ակինյան, Նշան, աշխատավորյան, 1957, էջ 1—12, Հ. Անկյան, Յուցակ Հայերեն ձեռագրաց Մինիթարյան մատենագարանի, իշխաննա, 1963, էջ 692—693), ապա պետք է բնդրունի, որ Հայերը մինչ այդ Հայութավուրբ չեն ունեցել: Բանասիրությունը առ այսօր հակառակը պնդելու փաստ չունի: Այսպիսս որ, շատ բնական է թվում, թե հույներից անմիջապես հետո և նրանց օրինակով Հայերն էլ (Սամվելի Խամբրչաձորեցի, Հովսեփ Կոստանդնուպոլիսից և թերևս ուրիշներ) ստեղծել են Հայութավուրբ և այդ ժողովածուներ, մեղանում արդեն ուղարկուած ունեցող որոշ ատաղծի հիման վրա:

38 «Նոր բանդիրը Հայկացեան լեզուի», Բ, էջ 615:

<sup>39</sup> «Եոր բառզիքը Հայկագեան լեզուի», թ, էջ 901։ *Sb' u նաև Հ.* Անաստան, Հայկական մատենայինառնելուն, Ա, ներածություն, էջ LX։

դապիսի (XII դ.) հաստատ ու վստահելի վկայությունը. «Զստացող սուրբ որոցս, — զրել է նա, — որ բովանդակեալ ունի լինքեան դխորհուրդս տօնից տէ- բունականաց, զոր սրբոց հարցն մերոց ողեշահ աշխատութեամբ բացայացե- ցաւ ի սրբոյն Գրիգորիսէ և Յովհաննէսի իմաստասիրի և Սամուէլի վարդապե- տի. շաբագրեցաւ ի բարտիսիս...»<sup>40</sup>:

Կարծում ենք, որ վերոհիշյալ փաստերից կարելի է ստուզ հետեցնել, թե Սամվել Կամրջաձորեցին մաս ու բաժին ունի և՛ Հայումավորքի, և՛ Տոնապատ- ճառի կազմության սկզբնական աշխատանքներում:

Դժվար է ճշտել, թե Հատկապես ինչպիսին է եղել նրա կատարած դերը, ինչ ծավալ, նյութերի ինչպիսի ընտրություն ու տեսք են ունեցել նրա կազմած ժողովածուները: Այն, ըստ երեսւթին, հունականի նմանությամբ կազմված մի ժողովածու է եղել, գուցե և մեղ հասած հայումավորքներից այն մեկի նման, որն ըստ Մ. Ավգերյանի ո՞չ Տեր Խորացելի, ո՞չ Էլ Կիրակոսի ու Սերենցի խրմ- րագրածների պես է<sup>41</sup>: Թերեւ այն «Ատոմադիր»-ի կամ «Հոռոմագիր»-ի նր- ման է եղել, կամ էլ զրանց մի տարրերակն է հանդիսացել ու զրանց ճանա- պարհով վեր է աճել ու նույնացել Հայումավորքին: Իսկ նրա Տոնապատճառը մեր կարծիքով, ունեցել է մոտավորապես № № 2021, 2049, 3795 ձեռագրերի տեսքը: այսպես ենք կարծում, որովհետեւ այս խմբի Տոնապատճառները ընդ- հանուր տոմամբ նման են իրար և զրանց համար Սամվել Կամրջաձորեցոց հետո այլ հեղինակ չի մատնանշվում կամ ենթադրվում: Ուստի, № 2021 ձեռա- գրի առաջին էջի վրա իրավացիորեն է զրվել.

ԶՏօնապատճառ գիրքս գովելի:

Արարեալ է Կամրջաձորոց

Սուրբ Յօրն Սամվելի<sup>42</sup>:

Սամվել Կամրջաձորեցոց հետո որպես Տոնապատճառ ժողովածուի խբա- գիր հիշվում է Հովհաննես Գանձակեցին (XIII դ.)<sup>43</sup>: Այս կապակցությամբ եղած տվյալները քիչ են և առայժմ թույլ չեն տալիս հանգամանորեն խոսել նր- ար կատարած աշխատանքի ընույթի ու արդյունքի մասին:

Դ. Ալիշանը վկաչակոշում է մի հիշատակարան, որտեղ ասված է, թե Կիրակոս վարդապետ ի թուականին հայոց ԶԲ (1253—1254) աշխատեալ յա- ւել ի նախակարգեալ Տօնապատճառաս՝ ճառու համառու հարիւր և երկոտա- սան»<sup>44</sup>: Պետք է ասել, սակայն, որ այս ավելի շուտ կարող է վերաբերել Հայու- մավորքին (ինչպես և դիտել է բազմավաստակ բանասերը), որովհետեւ մեղ հայտնի և ոչ մի Տոնապատճառ 112 նյութ իսկ շումի, ուր մնաց՝ այդքան ճառ<sup>45</sup>:

Տոնապատճառի կազմությանը այնուհետև առընչվում է Վարդան վար- դապիսի անունը: «Տօնապատճառ, զոր արարեալ է Վարդան վարդապետի»—

40 Գրիգորիս Արշարունեաց Քորեակակոսոսի Մեկնութիւն ընթերցուածոց, Վենետիկ, 1964, Ներածություն, էջ 27:

41 Մ. Ավգերյան, նշվ. աշխատակարան, էջ 49:

42 Մատենադարան, ձեռ. № 2021, էջ 1ա:

43 Մ. Ավգերյան, նշվ. աշխատակարան, էջ 49:

44 Դ. Ալիշան, Հայումավորք, էջ 107:

45 Անդ, էջ 107:

վկայում են մեզ հասած որոշ ձեռագրեր<sup>46</sup>: Մատենադարանի N 2041 ձեռագրի ստորին լուսանցքներից մեկում այս կապակցությամբ կա հետեւալ կողմնակի, բայց ուշագրավ վկայությունը՝ «Յայսմ տեղուոց սուրբ և գերամաքուր վարդապետն Վարդան՝ յօրինող և զանազանող այսմ մարգարէութեան մեծ յոյս և համարձակութիւն է եղեալ նեղուցելոց և յուսահատեցելոց սքանչելի օրինակաւ, հոգին սուրբ փառաւորեսցէ զնա և դասեսցէ ընդ սրբոց աստուածաբանիցն...»<sup>47</sup>: Իսկ 1267 թվականին Հաղրատում ընդօրինակված՝ Մատենադարանի N 4139 ձեռագրում պահպանված մի շատ ուշագրավ հիշատակարանից տեղեկանում ենք, որ Տոնապատճառը կազմել է այն Վարդան վարդապետը, որը միաժամանակ նշանավոր անձնավորություն է եղել, ունեցել է մանկավարժական և դրական լայն գործունեություն և հեղինակել է «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի»-ն: Ի դեպ, այս ձեռագիրը նրա կազմած Տոնապատճառն է հենց, և հիշատակարանը գրվել է նույն Վարդանի աշակերտ Տիրացու գրչի կողմից: Այս այդ հիշատակարանը. «Ե մերումս բացափաշլեալ ժամանակի յամենեցունց ողիս արեղակնածագ փայլմամբ նշողիւր լուսաւորե[ա]լ բստ բացման աշաց և ականչաց ներքին մարդուն՝ արանց, միանգամայն և կանանցն, մեծաց և փորունց, եկեղեցականաց և աշխարհականաց և ամենայն շափու հասակի, նաև օտարա[ցելոց]: ևս: Եւ աշուպէս երկար ժամանակ ի ծերութիւն հասե[ա]լ և [ան]պայման բարի բաղարավարութեամբ կեցեալ բստ կամացն աստուծոյ ի ուար[դ] եկեղեցւոյ[յ] և ի պարծանս ուղղափառ հաւատացելոց, փոխեցաւ ի հանպիստն արդարոց, յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի առաջի աստուծոյ:

Վասնորոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւոյ նորին մանգանց վերածնելոց ի Քրիստոս և բազում ինչ բան թիւրեալ ի սուրբ զիրս՝ յուղղեաց ի մեկնչաց սրբոց, նաև զՍաղմոսն զլխովին՝ զերկարութիւն յացլ և յայլ մեկնչաց ի մի վայր ժողովել կարձ և համառոտ բանիւ, սեփականել զիրահաս ընթերցողաց: Որուէս և զայս մեծ հոգեոր բուրաստանս ամենալիր ծաղկոցաց՝ Պատճառս տանից տէրունականաց և հաւաքմունք սուրբ բանասիրաց... որով և ես ի[սկ] յամենայնի անարժանս և անպիտանս, որ Տիրացու անուանեցաւ ի նորին աշակերտացն, որ և ի սա աշխատեցայ և բստ կարի իմում ջանացա զտէրունական Տաւնից պատճառն, որ ի սա զծագրեցար... հոշակաւոր սուրբ ուխտիս ի յաստուած[ակառո՞ց] ...Հաղրատ, թուին Հայոց ԶժԶ [1267]... տէրունական սուրբ և աստուածքնեալ նշանիս... և այլ սրբոց, յաթոռակալութեանս տէր Յովհաննիսի մեծի հոկտորի և սուրբ վերադիտողի...»<sup>48</sup>:

Սույն հիշատակարանի մասին հարկ ենք համարում բիշ ավելի մանրամասն խոսել այն պատճառով, որ զրա հետ կապվում են հատկապես Վարդան Արևելցու վերաբերյալ կենսագրական ու մատենագիտական մի քանի շատ կարևոր խնդիրներ և որ զրա շուրջ բանասիրության մեջ արգեն զոյացած է որոշ շփոթ:

Արդ, ո՞վ է այս հայտնի Վարդան վարդապետը: Մեր կարծիքով, աշտեղ հիշատակված Վարդանը կարող էր միայն Արևելցին լինել: Սույն հիշատակա-

<sup>46</sup> Մատենադարան, ձեռ. N 2043, էջ 90ա: Նույնը՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց Մատենադարան, ձեռ. N 373, էջ 13ր, տե՛ս ն. Պողարքան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, Բ. Երուսաղեմ, 1967, էջ 394:

<sup>47</sup> Մատենադարան, ձեռ. N 2041, էջ 327ր:

<sup>48</sup> Մատենադարան, ձեռ. N 4139, էջ 438ա—438թ: Հմատ, կ. եաշ ի կ յ ա ն, Յաղագս Տարեմատին ի վանական վարդապետէ ասացեալ, Առաջարան, «Դիտական նյութերի ժողովածու», 1. Երևան, 1941, էջ 155—156:

բանի վկայությամբ, նշված Վարդանը «արեգակնածագ փայլմամբ» լուսավորում էր «ի մերումս բացափայլեալ ժամանակի», այսինքն XIII դ. 69-ական թվականներին։ Այդ տարիներին Վարդան Հաղբատեցու գոյության մասին խոսր լինել չի կարող։ Հայտնի չէ նաև, որ Այգեկցի և Բարձրերդցի Վարդանները երբել եղել են Հաղբատում։ Հետեաբար, հավանական չէ, որ խոսքը նրանց վերաբերի։ Զեռազրի գրիշու ու հիշատակարանի հեղինակ Տիրացուն վկայում է, որ ինքը ընդամենը մեկ տարի առաջ, 1266 թ. գեռ աշակերտ էր այդ նույն Վարդանի մռու, Խոր Վիրապում։ Այսպիսով, նա չէր կարող հաղբատեցի Վարդանի աշակերտը լինել, որը մահացել է դեռևս 1191—1194 թվականներին, ինչպես ցույց է տվել Ն. Ակինյանը<sup>49</sup>։ Վերջապես, դարձյալ այդ հիշատակարանի վկայությամբ, խոսքը վերաբերում է այն Վարդանին, որը հանդիսանում է «Մեկնոբին Սաղմոսաց Դաւթի» երկի հեղինակը և Տոնապատճառ ժողովածուի կազմողը։

Ինչպես կտեսնենք ստորեւ, հիշյալ մեկնությունը, անտարտկույս, պատկանում է Արևելցու գրչին, իսկ Տոնապատճառը վերակազմող հեղինակի խնդիրը թեև ուսումնասիրության չի առնված առ այսօր, սակայն իրավամբ կարգում է այս Վարդանի հետ<sup>50</sup>։

«Մեկնոբին Սաղմոսաց Դաւթի» աշխատության Վարդան Արևելցու զըրշին պատկանելու վերաբերյալ մեր կարծիքին ի հաստատություն կարող ենք բերել հետեւյալ լրացուցիչ փաստերը։ Վարդան Արևելցու «ի ՃԱ սաղմոսն» հառի և վերոհիշյալ «Մեկնոբին Սաղմոսաց Դաւթի»-ի մեջ համապատասխան սաղմոսի (ՃԱ) վերաբերյալ արված մեկնարանական տողերի միջև կան որոշակի ընդհանրություններ և համանման ձևակերպված նույնական մտքեր։ Այսպես,

49 Ն. Ա. կ. ին յան, Մատենագրական հետազոտություններ, Ա., Վիեննա, 1922, էջ 72—73։

50 Կարապետ Տեր-Մկրտչյանը այս առիթով գրում է. «Այսուղի հիշված Վարդանն էլ պատմի՛ց չէ, ինարկե, որովհետեւ 1267 թվականին արդեն վախճանված էր, իսկ պատմի՛ց վախճանվել է 1271 թ. . .»։ Նա միաժամանակ գտնում է, որ այս հիշատակարանում երկու Վարդաններ (Մանահնի առաջնորդ և Արևելցի) շփոթված են, քանի որ, ըստ նրա բացարության, հիշատակարանում «Մեկնոբին Սաղմոսաց Դաւթի»-ն իբր թե վերագրված է Մանահնի առաջնորդ Վարդանը, իսկ անվագն երկրայիլի։ Հիշատակարանում նշված Վարդանն, ինչպես ինքն էլ է ասում, Վարդան Այգեկցին լինել չէր կարող, չը կարող լինել նաև Վարդան Հաղբատեցին, որովհետեւ նրա ամենաուշը 1195 թվականին մահացած լինելը ստույգ է (Ն. Ակինյան, նշվ. աշխ. Ա., էջ 72—73)։ Աւատի, մնում է մտածել, որ նա կամ իրապես Վարդան Արևելցին է, կամ էլ մի ուրիշ Վարդան, որը, սակայն, նույնական պետք է մեծ վաստակի, մանեկավարժական գործունեության և համբավի տեր եղած լինի, ինչպահ հայտնված է նշված հիշատակարանում։ Այսպիսի մի Վարդանի մասին դեռևս ոչ մի տեղ որոշակի խոսք չի եղել։ Կ. Տեր-Մկրտչյանը վկայակուում է երկու փաստ իբրև հաստատություն այն բանի, որ կոու ժողովին մասնակցող Վարդանը Հաղբատեցին չէր կարող լինել, ինչպես վկայում է Ն. Ակինյանը (անդ, էջ 72), այլ այն Վարդանը, որը զեռ 1211 թվականին եղել է առաջնորդ Մանահնի։ Բայց այն Վարդանն է, որի մասին խոսվում է վերոգրյալ հիշատակարանում։ Չէ որ առաջնորդ լինելը դեռ ապացույց չէ այն բանի, որ նա հայտնի մատենագիր է եղել և ունեցել է աշակերտներ։ Իսկ առ այսօր ոչ մի վկայություն մեզ չի հասել, որ առաջնորդ Վարդանը եղել է նաև այդպիսին։ Մինչդեռ հիշատակարանում պարզ ասված է, որ այստեղ նշված Վարդանը արդյունաշատ և անվանի մատենագիր է (Կնիք հաւատոյ... էջմիածին, 1914, Ներածություն, էջ CXLII—CXLV։ Այս մասին մահրամատն տե՛ս մեր «Վ. Արևելցու գրական-գեղարվեստական երկերը» դիսերտացիոն աշխատությունը, էջ 329—332, անտիպ)։

Սաղմոսաց մեկնութիւն...  
Մոտ եղէ ի գիշերի՝ կատարած  
կենաց, զի շուր դիւրաշարժ է և  
յերեկոյին բնաւ պակասի, որպէս  
խոտ ցամաքեալ, որ դձեռս հնձո-  
ղին կոչէ ի հնձել, և մարդ ծերա-  
ցեալ՝ զմահ...»<sup>51</sup>:

## Ճառ ի ՃԱ Սաղմոսն

...Որպէս ի մտանել արկուն ընդ  
ամբով բոլոր աշխարհս ստուեր  
լինի ևս առաւել ի մուտ Արեգա-  
կանն... ցամաքեալ խոտ դձեռս  
հնձողացն յառաջ կոչէ, որպէս  
հասակ մարմնոյն ծերացեալ՝  
զմահ...<sup>52</sup>

«Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի»-ի մեջ կա բազվածք Հովհաննես Վանա-  
կանի երկից. «Վանական վարդապետի ասացեալ, խնդրել պարտ է, թէ յի՞նչ  
միտո ասեմ ի լիշատակի մեռելոց, ասեն, թէ ի վերայ զերեղմանին Աղամայ  
ասաց Դաւթի դայս Սաղմոս...»<sup>53</sup>: Զեռագրական մանրակրկիտ համեմատու-  
թյուններից պարզվում է, որ Հովհաննես Վանականի երկերից ամենից առաջ  
օգտվել են նրա անմիջական աշակերտները և, հատկապես, Վարդան Արևելցին:  
Նրա գրեթե յուրաքանչյուր փոքր ու մեծ աշխատության մեջ Հովհաննես վա-  
նականը հիշատակված է իրեւ օգտագործված աղրյուրի կամ մտքի հեղինակ:  
«Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի»-ի դեպքում էլ նույն որոշակի փաստն է նր-  
էատվում:

Հայտնի է նաև, որ Վարդան Արևելցին Հովհաննես Ռոկերերանին սիրում  
է կոչել «Ռոկիաբան»<sup>54</sup>: Հիշյալ Մեկնության մեջ ևս ասված է, «Ռոկերանն  
Հովհան»<sup>55</sup>: Այս էլ, մեր կարծիքով, օժանդակ մի փաստ է, որը նույնույն մեղ  
տանում է դեպի Վարդան Արևելցին:

Սաղմոսաց մեկնության առաջարանում կարդում ենք հետևյալը. «Որպէս  
է մեղ ետուն հրաման կանուխ և անազան ի ձեռն խնդրոյ զկանուխն անուանա-  
կիր միոյ տեառն՝ զլուխն արհեական տէր Յովհաննես, նստեալն յաթոռ Սուրբ  
ուխտին: Հաղրատայ յերեանի աշխարհի՝ հարկեցուցիլ և վճիռ հրաման տալ»<sup>56</sup>.

<sup>51</sup> Վարդան Վարդան Վարդան Սաղմոսաց Դաւթի..., Աժտարիան, 1797, էջ 331:

<sup>52</sup> Մատենագարան, ձեռ. № 4139, էջ 403ա—403բ:

<sup>53</sup> «Վարդան Վարդան Վարդան Սաղմոսաց Դաւթի», էջ 419:

<sup>54</sup> Մատենագարան, ձեռ. № 750, էջ 1ա:

<sup>55</sup> «Վարդան Վարդան Վարդան Սաղմոսաց Դաւթի», էջ 421:

<sup>56</sup> Անդ, էջ 3: Խնչողն հայտնի է, Հաղրատում XIII դ. պաշտոնավարել են Հովհաննես անու-  
նում մի քանի առաջնորդներ, որոնց անձնավորությունն ու ժամանակագրությունը առ այսօր  
լրիվ չի վերականգնված նույնիսկ նրանց վերաբերող ամենավերջին և ամենաամրողչական աշխա-  
տաթյուններում (տե՛ս 4. Ղաֆադարյանի, Հ. Ռոկյանի նշված աշխատառությունները): Բատ  
Մ. Չամչյանի, հիշյալ պատմիրատուն Բագրատունի Հովհաննեսն է (Մ. Չամչյան, Պատմությունները  
հայոց, Գ., Վենեսաբիկ, 1786, էջ 240—241): Սույն կարծիքին է նաև Հովհաննես Դրիմեցին, (տե՛ս  
նրա Պատմություն հաշակաւոր վանից Հաղրատայ սուրբ նշանին, Վիեննա, 1965, էջ 88, 107): Սնհագանական շեն ուս, եթե անզամ ոչ թե 1251, այլ, համաձայն Հ. Անառյանի, 1242 թվականին  
մահացած լինի նա (տե՛ս Հ. Անառյան, Հաղրատայ առոր նշանին, Վիեննա, 1965, էջ 587): Սա-  
կայն կա նաև մյ այլ ուշագրավ հանգամանք: Հաղրատի վիմագիր արձանագրությունները (տե՛ս  
4. Ղաֆադարյան Վարդան Վարդան Սաղմոսաց Դաւթի առաջնորդ լինելը Հաղրատապն ու Հովհաննեսը  
ուարբերաբար հաշորդում են միմյանց 1240—1257 թվականների ընթացքում: Այդ Հովհան-  
նեսը, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ Բագրատունին է՝ վերստին առաջ-  
նորդ ընտրված: Հայտնի է, որ սույն Համազասպ առաջնորդը Վարդան Արևելցուն պատվիրել  
է զրեւ մի քանի ներբող՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին, նրա «Թօսներին», Հովհան Օձնեցուն:

Այս դեսպրում հրաման տվողը Հաղբատի այն Հովհաննես վանահայրն է, որը պաշտոնավարել է 1240 թվականից ոչ շուտ, ուստի, ժամանակակիցն է Վարդան Արեվելցու<sup>57</sup>:

«Գրոց ցանկերում» Սաղմոսի մեկնությունը վերագրված է Վ. Արեվելցուն<sup>58</sup>. Աարծում ենք, պետք չէ անտեսել մատենագրական ավանդությունը, որը դարերի ընթացքում որպես Հիշյալ երկի հորինող մատնանշել է Վ. Արեվելցու անունը:

Կ. Տեր-Մկրտչյանը հակասություն է տեսնում № 4139 ձեռագրի հիշատակարանում նշված Վարդանի ու Վարդան Արեվելցու մահվան տարեթվերի՝ 1267-ի և 1271-ի միջեւ<sup>59</sup>: Իսկապես էլ այդտեղ հակասություն կա: Դժվար է բացատրել, թե ինչու վերոգրյալ հիշատակարանում ամեն ինչ ճիշտ պիտի նշվեր Վարդան Արեվելցու մասին և, հանկարծ, սխալ հաղորդված լիներ նրա մահվան թվականը: Արդյո՞ք դա զրշական վրիպակ չէ: Զեռքի տակ ունենք նույն զրշի ևս մի հիշատակարանը՝ 1270 թվականին ընդօրինակված № 1119 ձեռագրի մեջ, ուր դարձյալ խոսք է լինում Սաղմոսի մեկնության հեղինակ Վարդանի մասին<sup>60</sup>, սակայն ոչ մի ակնարկ չկա նրա արդեն մահացած լինելու վերաբերյալ: Վերջապես, մեղ հայտնի է այս նույն Տիրացու զրշի մի երրորդ հիշատակարանը, որտեղ, իմիշխալոց, ասված է հետեւյալը. «Յիշատակ նորա [Վարդանայ վարդապետի] օրհնութեամբ եղիցի, ամէն: Վասն որոյ, և՛ Տիրացու, անարժան աշակերտ գոլով նորուն, անտառ տեղեան գրեցի զսա... կատարեցաւ սա ի վիրապն. մինչ կաաք մեք ի յուսման ի թվին Զեֆ (1266), յիշեցէք ի տէր...»<sup>61</sup>: Այստեղից պարզ է դառնում, որ Տիրացու, անտարակույս, Վարդան Արեվելցու անմիջական աշակերտն է եղել, քանի որ ուսանել է նոր վիրապում 1266 թվականին, որտեղ այդ ժամանակ ուսուցանող Վարդանը ինչպես հայտնի է, եղել է Արեվելցին: Հետեւարար, նրա վերոհիշյալ հիշատակարանի խոսքերն էլ կարող էին վերաբերել միայն այս Վարդանին:

Այս հիշատակարանը հրատարակել է Լ. Խաչիկյանը և նույնպես զտել, որ այնտեղ նշված Վարդանը Արեվելցին է: Աչա թե ինչ է զրում նա այս կապակցությամբ, «...ունի ընդորձակ և շատ հետաքրքիր հիշատակարան Վարդան Արեվելցու կյանքի և «Տօնապատճառ» կոչվող ժողովածուների ծագման պատմությունն ուսումնասիրելու համար»<sup>62</sup>:

Ըստ Երեւոյթին, Համապատակի օրինակով Հովհաննեսն էլ Հարի ու պատշաճ է համարել այդ նույն Վարդանին պատվիրել զրելու «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթիւն»: Թեև ստույգ շղթաներ, թե ինչ Հիմք են ունեցել Հիշյալ երկի հրատարակիչները, երբ որպես հեղինակման թիվ նշել են 1251-ը, սակայն կարելի է այն ընդունելի համարել, նկատի ունենալով Հովհաննես Վանականի անվան և որպես աղբյուրի նրա անանուն աշխատության հիշատակությանն առնչվող ժամանակագրական մերոհիշյալ հանգամանքները: Հստ այդմ էլ Հիշյալ Մակնությունը պետք է զրկած լինի ոչ շուար, քան 1240 թ. և ոչ ուշ, քան 1257 թ.: Այս թվականները նույնպես առավելագույնս պատշաճութեամբ են Արեվելցի Վարդանի կյանքի և զրծունետթյան մանրամասնություններին:

57 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Էջ 195:

Հ. Բ ս կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 110:

58 Հ. Ա ն ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ ԼX—ԼХІІІ:

59 «Կնիք հաւատոյ», Ներածություն, էջ ԾХІІІ:

60 Մատենադարան, ձեռ. № 1119, էջ 5:

61 Ս. Տ ե ր - Ա գ ե տ ի ս յ ա ն, Ցուցակ Հայերեն ձեռագրաց նոր Զուղայի (Մատենադարան Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ), № 354:

62 Լ. Խ ա շ ի յ ա ն, «Յաղագս Տարեմտին ի Վանական վարդապետի ասացեալ», Առաջարան, էջ 155:

Նկատելի և կարեռ փաստ է, որ Հովհաննես Վանականը իր աշակերտներին անմիջական ցուցում է տված եղել հատուկ զբաղվել Հայսմավուրբների, Տոնապատճառների, թերեւ նաև մյուս ժողովածուների վերակազմության ու խմբագրման աշխատանքներով։ Դրանցից տեր-Խորայելի և Կ. Գանձակեցու<sup>63</sup> կատարած աշխատանքներն այդ բնագավառում՝ արդեն հայտնի են (նրանց են վերագրվում Հայսմավուրբի երկու իրարից անկախ խմբագրություններ)։ Հավանական է, որ Տոնապատճառի վերախմբագրումն ու վերակազմությունը հանձնարարված է եղել Վարդան Արեկեցուն։

Այս բոլորից, կարծում ենք, խնդրո առարկա ժողովածուների վերաբերյալ եղած շփոթության մեջ կարելի է ավելի հստակություն մտցնել, ավելի պարզ պատկերացում ունենալ դրանց և, հատկապես, Տոնապատճառի մասին և ստուգապես հետեւցնել, որ № 4139 ձեռագրի հիշատակարանի Վարդանը՝ ինքը Վարդան Արեկեցին է։ Ուստի, կասկածից գուրս է նաև, թե նա է, որ վերախմբագրելու ու վերակազմելու Տոնապատճառ ժողովածուն, փոխել է նրա նախական կառուցվածքը (հմմտ. № 4139 ձեռագիրը №№ 2021, 2039 ձեռագրերի հետ), նոր նյութեր ավելացրել և իր հեղինակած ճառերը զետեղել նրա մեջ (տես 4139 ձեռագրի թթ 235 ա, 327թ, 367ա, 386ա, 387թ)։

П. П. АНТАПЯН

### СБОРНИК «ТОНАПАТЧАР»

В армянском рукописном наследии сохранился ряд специфических церковно-обрядовых сборников, которые являются интересными памятниками армянской средневековой литературы.

Статья посвящена исследованию одного из этих сборников—«Тонапатчара» (сборник теоретических объяснений о церковных праздниках).

В статье освещены некоторые особенности «Тонапатчара», его связи с аналогичными памятниками, затронут вопрос о времени составления и предполагаемых авторах данного сборника.

«Тонапатчар» сохранился в трех основных редакциях. В статье они представлены соответствующими списками материалов (заголовок и первая строка), взятых из рукописей №№ 2201, 2039 и 4139.

Подробный филологический анализ приводит автора к выводу, что последний редактор сборника, Вардан, не кто иной как известный писатель и историк XIII века Вардан Аревелци.

63 Ի դեպ, Հակառակ որոշ Հեղինակավոր աշխատություններում տրված եղբակացությունների, Հայսմավուրբի Կիրակոս Գանձակեցու կողմից խմբագրված լինելը, մեր կարծիքով, զենքնականապես պարզված չէ։ Այլ առիթով անդրադառնալու ենք այս խնդրին։

64 «Յանմաւուրբ», Կ. Պոլիս, 1834, Յանաշարան, էջ 1—2։ Մ. Ավելիքյան, նշվ. աշխ., Ներածութիւն, էջ 29—29։ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Շանշանյանի, Երևան, 1961, Առաջարան, էջ իւ—իջ, իթ։

P. P. ANTABIAN

„TONAPATCHAR“

L'héritage manuscrit arménien comprend quelques recueils rituels spécifiques, qui sont d'intéressants monuments de la littérature arménienne médiévale.

L'article est consacré à l'un de ces recueils, au „Tonapatchar“ (recueil d'explications théoriques au sujet des fêtes religieuses).

L'auteur examine certaines particularités du „Tonapatchar“, son rapport aux recueils analogues, ainsi que les questions relatives à l'époque de la rédaction et aux auteurs supposés du recueil.

Le „Tonapatchar“ a eu trois principales rédactions. Dans l'article elles sont représentées par des listes de matériaux (en-tête et première ligne) puisées aux manuscrits №№ 2201.2039 et 4139.

Une analyse philologique détaillée amène l'auteur à conclure que le dernier rédacteur du recueil, Vardan, n'est autre que Vardan Areveltsi, célèbre écrivain et historiographe du XIII siècle.

